

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ.
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ
ԲԱՐԵԼԱԿՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Վերլուծական զեկույց

ՍՈՆԱ ՄԱՆՈՒՄՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Հեղինակային հրատարակություն

2015



Open Society Foundations - Armenia

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Սույն գեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N18259:

Ձեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Մ280 Մանուսյան Ս.Հ., Խաչատրյան Ն.Գ. / **Հասարակություն և հասարակական կազմակերպություններ. հարաբերությունների խնդիրներ և բարելավման ուղիներ** .- Երևան: Հեղ. հրատ., 2015. – 68 էջ:

Վերլուծական գեկույցը հիմնված է 2013-2014թթ. իրականացված՝ «ՀԿ-ների տեղը քաղաքացիների «յուրայիններ» և «ոչ յուրայիններ» սոցիալական տարածքում» հետազոտական նախագծի վրա: Ձեկույցի նպատակն է վեր հանել Հայաստանում իրավապաշտպան ՀԿ-ների հանրային ընկալումն ու ՀԿ-ներ-քաղաքացիներ առնչության խնդիրները և առաջարկել իրավապաշտպան ՀԿ-ների գործունեության արդյունավետության ու հանրային կապերի բարելավման ուղիներ: Ձեկույցը կարող է օգտակար լինել տեղական ՀԿ-ներին և դոնոր կազմակերպություններին, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հիմնախնդիրներով հետաքրքրված հասարակագետների լայն շրջանակի:

ISBN 978-9939-0-1596-5

© Մանուսյան Սոնա 2015

© Խաչատրյան Նարինե 2015

ՀՏԴ 316 (042.3)

ԳՄԴ 60.5

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Սեղմագիր	4
Ներածություն	7
Գլուխ 1. Հասարակություն և քաղաքացիական հասարակություն. Խնդրի սահմանում և իրավիճակի վերլուծություն	
<i>1.1. Քաղաքացիական հասարակությունը, ՀԿ սեկտորը և դրա ընկալումները Հայաստանում. սկզբնավորումը և ներկա իրավիճակը</i>	12
<i>1.2. Կառավարություն և ոչ կառավարական կազմակերպություններ. հարաբերությունների այլընտրանքներ և հայաստանյան իրավիճակ</i>	19
<i>1.3. ՀԿ-հասարակություն հարաբերությունները Հայաստանում. ուսումնասիրություններ և չդիտարկված ասպեկտներ</i>	24
Գլուխ 2. Հետազոտության արդյունքներ և այլընտրանքների քննարկում	
<i>2.1. Հարցազրույցներ մարդու իրավունքների ՀԿ ներկայացուցիչների հետ. ՀԿ սեկտորի տեսակետները և անտեսած կետերը</i>	30
<i>2.2. ՀԿ-ների վերաբերյալ երիտասարդների պատկերացումները և գնահատականները. ֆոկուս խմբերի արդյունքների վերլուծություն</i>	43
<i>2.3. ՀԿ-ների ճանաչում, վստահություն և ներգրավման պատրաստակամություն երիտասարդների շրջանում. հարցաթերթային հարցման արդյունքներ</i>	46
Եզրակացություններ և առաջարկներ	
<i>Եզրակացություններ</i>	55
<i>Առաջարկներ</i>	61
Գրականություն	66

ՍԵՂՄԱԳԻՐ

Հանրային քաղաքականությունների ձևավորման մեջ չի վիճարկվում հասարակական կազմակերպությունների¹, հատկապես իրավապաշտպան և շահապաշտպան կառույցների դերը: Դոնոր կազմակերպությունները, ինչպես և հենց ՀԿ-ները, իրենց տեսնում են ժողովրդավարական ինստիտուտների և պրակտիկաների ձևավորման կարևոր դերակատարներ: Բավարար չեն քննարկված, սակայն հենց ՀԿ-ների «քաղաքականությունները», այն է՝ մոտեցումները, որոնցով նրանք ցանկանում են հասնել այդ արդյունքներին ՀՀ-ում: Տարբեր հետազոտություններ տարբեր չափանիշների տեսանկյունից և տարբեր մակարդակի են գնահատում երկրում ՀԿ դաշտի արդյունավետությունը, սակայն վերլուծությունների բաց կա այն հարցում, թե *որքանով են ՀԿ-ներն արդյունավետ հանրության հետ հարաբերություններում: Մասնավորապես՝ որքանով են ընկալելի, վստահելի, և հատկապես ինչն է պետք բարելավել ՀԿ գործունեության և դրա ներկայացման մեջ՝ ավելի մեծ հանրային ընդունելության և ազդեցության համար:*

Քաղաքացիական սեկտորի ինչպիսին լինելն իրականում շահկապված է այն բանի հետ, թե ինչ է և ինչպիսին է այն հանրային ընկալումներում: Վերջինս նաև ցուցիչ է այն բանի, թե որքանով են իրավապաշտպան ՀԿ-ները հաջողել որպես ինստիտուտ:

Հետազոտությունը, որի արդյունքները ներկայացնում ենք այս զեկույցում, իրականացվել է 2013-14թթ. և նպատակ է ունեցել վերլուծել Հայաստանում իրավապաշտպան² ՀԿ-ների հանրային ընկալումն ու խնդիրները քաղաքացիներ-իրավապաշտպան ՀԿ-ներ հարաբերություններում՝ ՀԿ-ների գործունեության արդյունավետության ու հանրային կապերի բարելավման ուղիներ առաջարկելու

¹ Այսուհետ՝ ՀԿ:

² Այսուհետ տեքստում կարող է հանդիպել նաև ՄԻ (մարդու իրավունքների) ՀԿ-ներ կամ պարզապես ՀԿ-ներ տարբերակը:

համար: Չլինելով քաղաքականության դասական փաստաթուղթ՝ պետությանը հասցեագրված լինելու իմաստով, այս վերլուծությունն ուղղված է իրավապաշտպան ՀԿ-ների *ներքին քաղաքականության խնդիրների ու բարելավման ուղիների վերհանմանը*:

Այս նպատակով ուսումնասիրվել են երևանաբնակ երիտասարդ սեզմենտի և իրավապաշտպան ՀԿ-ների ներկայացուցիչների տեսակետները, ինչպես նաև կատարվել է իրավիճակի վերլուծություն տարբեր երկրորդային աղբյուրների հիման վրա: Վերլուծության բաղադրիչ են եղել նաև պետություն-ՀԿ-ներ հարաբերությունների մոտեցումները և խնդիրները:

Հետազոտությունը թույլ է տալիս տեսնել, որ ԹՀ³ սեկտորը կարիք ունի ավելի մեծ հանրային վստահության, սակայն ոչ բոլոր կառույցներն են դա ճանաչում որպես սեփական խնդիր: Վերհանվել են ինչպես *ընդհանուր՝ սոցիալ-քաղաքական, հանրային, այնպես էլ սպեցիֆիկ՝ ՀԿ-ների գործառնությունից բխող խնդիրներ, որոնք ազդում են ՀԿ-ներ-հանրություն փոխադարձ ընկալումների վրա*:

Չբացառելով ՀԿ-ների արդյունավետությունը սահմանափակող ազդեցիկ քաղաքական և մշակութային այլ գործոններ՝ մեր առաջարկներն ուղղված են առաջին հերթին ՀԿ-ների *գործելաոճերում ու տեղեկատվական քաղաքականության* մեջ առկա խնդիրների շտկմանը: Դրանց շարքում են ՀԿ-ների կողմից հանրային իրազեկման և սոցիալական գովազդի պակասը, հանրության հետ հաղորդակցության ուժի և մեդիա-ռեսուրսների օգտագործման անարդյունավետությունը, դիսկուրսիվ հեռավորությունը ՀԿ սեկտորին և քաղաքացիական դիսկուրսին անհաղորդ լայն շերտերի հետ: Առաջարկների մշակման մեջ հաշվի են առնվել այն սոցիալ-հոգեբանական մեխանիզմները, որոնք կարող են նպաստել հանրային վստահության աճին ու սոցիալական և դիսկուրսիվ դիստանցիայի կրճատմանը:

³ Քաղաքացիական հասարակություն:

Հուսով ենք, որ հետազոտության շարունակականությունը թույլ կտա բարելավման մեխանիզմները դարձնել ավելի կոնկրետ:

Վերլուծական փաստաթղթի կառուցվածքը. Ներածությանը հաջորդող բաժնում ներկայացված են *խնդրի սահմանումը և վերլուծությունը*, որը կենտրոնանում է հանրության մեջ քաղաքացիական հասարակության կառույցների դերի ու ընկալման վրա և հենվում է ինչպես արդի գրականության և արտերկրյա հետազոտություններին, այնպես էլ ներքին գնահատականներին: Հաջորդ բաժնում անդրադարձ է արվում *պետություն-ՀԿ սեկտոր հարաբերություններին և դրանց առանձնահատկություններին Հայաստանում*, որպես երկրում իրավապաշտպան ՀԿ-ների հանրային ընդունելության և արդյունավետության վրա ազդող հանգամանք: Հետագա երկու բաժիններում ներկայացնում ենք մեր իրականացրած ֆոկուս-խմբային ու անհատական հարցազրույցների և հարցման արդյունքները: Վերլուծությունը եզրափակում են տվյալների համադրման հիման վրա արված եզրակացությունները և առաջարկները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իրավիճակի նկարագրություն. Քաղաքացիական հասարակության⁴ կառույցները կոչված են էականորեն նպաստել ՀՀ հասարակության ժողովրդավարացմանն ու արդիականացմանը՝ լինելով կարևոր միջնորդող օղակ քաղաքացու և պետական կառույցների միջև, վերջիններիս ստիպելով կամ օգնելով աշխատել, իսկ շատ դեպքերում՝ անգամ նրանց որոշակի գործառույթներ փոխարինելով: Երկրում ակտիվ գործող շատ քաղաքացիական կառույցներ և խմբեր միտված են հասարակայնորեն նշանակալի ձեռքբերումների, կամ՝ առնվազն բացասական զարգացումներին դիմադրելու. նրանք երկրի զարգացման համար, կարծես, չափազանց մեծ պատասխանատվություն են ստանձնել: Այդ զարգացումը, սակայն, կախված է ոչ միայն ՀԿ սեկտորից և առավել ևս՝ ոչ սոսկ դրա գոյության փաստից: Շատ վերլուծություններ վեր են հանում, որ երկրում ավելի ուժեղ քաղաքացիական հասարակության կարիք կա, որը չի սահմանափակվում ՀԿ դաշտով, իսկ երբեմն կրում է հենց դրանում առկա խնդիրների նեգատիվ ազդեցությունը⁵: Հաշվի առնելով այսօր Հայաստանում աճող սոցիալական դժգոհությունը և պետական կառույցների հանդեպ ծայրահեղ ցածր վստահությունը⁶, ինչպես նաև միջազգային ժողովրդավարական կառույցների

⁴ Այսուհետ՝ ՔՀ:

⁵ Տե՛ս, օրինակ, Ishkarian, A. (2009). (Re) claiming the emancipatory potential of civil society: a critical examination of civil society and democracy building programs in Armenia since 1991. *Armenian Review*, 57(1-4), 9-34; Հայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորությունները և ռիսկերը (2011). *Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն*, Երևան, http://transparency.am/files/publications/NED_publication_arm_3.pdf:

⁶ Տե՛ս, օրինակ, 2013-ին Անդրկովկասի այլ երկրների հետ համեմատության մեջ աչքի զարնող անվստահությունը ՀՀ-ում սոցիալական և քաղաքական ինստիտուտների նկատմամբ: <http://crrc-caucasus.blogspot.com.au/2015/06/trust-in-institutions-in-south-caucasus.html>.

ապավինումը տեղական ՔՀ կառույցներին, հրատապ է դառնում դիտարկել, թե ինչպիսին է այլընտրանքային, «ներքևի» ուժերի հանդեպ հանրային վերաբերմունքը. ինչպես ու ինչքանով է հանրությունը և հատկապես դրա երիտասարդ սեզմենտն իրեն ընկալում քաղաքացիական ուժերի հետ Մենք-ի տարածքում: Այս հարցադրումները կարելի է ամփոփել նաև այսպես. ի՞նչ հնարավորություններ կան նեղ իմաստով քաղաքացիական հասարակությունից⁷ լայն իմաստով քաղաքացիական հասարակության՝ որպես հանրության մոդելի, անցնելու: Ասվածը քաղաքականության վերլուծության խնդիր է առնվազն երկու իմաստով.

(1) ենթադրում է ՀԿ-ների ներքին քաղաքականության, այն է՝ սեփական գործունեության ու նպատակներին հասնելու մոտեցումների բարելավմանն ուղղված ուսումնասիրություն, (2) դիտարկում է իրավապաշտպան⁸ ՀԿ-ները որպես սեկտոր, որը ներգրավված է քաղաքականությունների ձևավորման մեջ՝ հանրության անունից իրականացնելով պետական կառույցների վերահսկման դեր:

Երկու առումներով էլ ՔՀ սեկտորը խոցելի է, կարիք ունի հանրային ավելի մեծ վստահության, քան ունի այսօր: ՀԿ սեկտորը, հատկապես ՄԻ ՀԿ-ները տարբեր գաղափարական ազդեցությունների ներքո լայնորեն զուգորդվում են ազգային անվտանգության սպառնալիքի, արտաքին միջամտության և պատվերի հետ: Սա այն անվստահությունն է, որ իշխանություններն ինչ-որ չափով կարողացել են սերմանել քաղաքացիական սեկտորի հանդեպ՝ այդ նույն հանրային վստահությունը չունենալով հանդերձ: Սա, ինչևէ, չի կարող լինել

⁷ ՔՀ-ը վիճարկված և վերջնականապես չսահմանված հասկացություն է, որն առանձին անդրադարձ է ենթադրում: Տվյալ դեպքում մենք նկատի ունենք լայն իմաստով իրենց քաղաքացիորեն ակտիվ դիրքավորող խմբեր, կառույցներ:

⁸ Չնայած իմաստային նրբերանգին վերլուծության մեջ փոխարինաբար օգտագործված են իրավապաշտպան ՀԿ-ներ և Մարդու իրավունքների պաշտպանության (ՄԻ) ՀԿ-ներ հասկացությունները, քանի որ ներառվել են ինչպես ընդհանուր ՄԻ խնդիրներով, այնպես էլ առանձին խմբերի/ուղորտների շահապաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ները:

հանրային ընկալման միակ շերտը: ՀԿ-ների գործունեության հանրային ընկալումների վրա ազդում է նաև խորհրդային ժառանգության գործոնը, սակայն դա ևս միակ գործոնը չէ: Հանրային ցածր ընկալելիության հարցում ՀԿ-ները ևս բացեր ունեն, որոնք լրացնելը չպետք է փոխարինվի միայն սոցիալ-քաղաքական կամ պատմական գործոնների մեջբերումով: Սա նաև նշանակում է, որ սեփական արդյունավետությունը և իմիջը բարձրացնելու ներքին ռեսուրսներ կան, որոնք այսօր բավարար չեն օգտագործվում:

Հետազոտության նպատակն է վերլուծել Հայաստանում իրավապաշտպան ՀԿ-ների հանրային ընկալումը և խնդիրները քաղաքացիներ-իրավապաշտպան ՀԿ-ներ հարաբերություններում՝ ՀԿ-ների գործունեության արդյունավետության ու հանրային ընդունելության մեծացման ուղիներ մշակելու և առաջարկելու համար: Համադրված ուսումնասիրվել են երևանաբնակ երիտասարդների և իրավապաշտպան ՀԿ-ների ներկայացուցիչների տեսակետները: Ակնկալվող արդյունք են հանդիսացել ինչպես ՀԿ-ներին, այնպես էլ աջակցող դոնոր կառույցներին հասցեագրված առաջարկները՝ ուղղված հասարակության հետ կապի օղակներն ավելի արդյունավետ դարձնելուն:

Ուսումնասիրությունը հասցեագրել է հետևյալ փոխկապակցված խնդիրները.

- Ինչպիսի՞ն են իրավապաշտպան ՀԿ-ների վերաբերյալ հանրային դիրքորոշումները. ինչքանո՞վ է ՀԿ գործունեությունն ընկալելի, որո՞նք են գերիշխող պատկերացումները, կերպարները և վերագրումները: Որո՞նք են այս հարցերում հիմնական խնդիրները և դրանց գործոնները:
- Ինչպիսի՞ն է ՀԿ-ներում ներգրավվելու պատրաստակամության աստիճանը:

- Որքանով են երիտասարդների ընկալումները և գնահատականները տարբերակված ըստ ՀԿ-ների գործունեության ոլորտների, ի՞նչ գործոններով է պայմանավորված (ներառյալ ՀԿ ոլորտի սպեցիֆիկայից բխող) հանրային ընկալման դրական փորձը որոշ ՀԿ-ների դեպքում, որ կարող է կիրառվել այլ ՀԿ-ների փորձում:

- Ի՞նչ ընկալումներ, դիրքորոշումներ և առնչվելու պատրաստականություն ունեն ՀԿ ներկայացուցիչներն իրենց շահառուների և շահագրգիռ կողմերի վերաբերյալ:

- Որո՞նք են այն գործոնները, սուբյեկտներն ու աղբյուրները, որոնք ձևավորում են ՀԿ-ների մասին պատկերացումները երիտասարդների տարբեր խմբերում:

- Ի՞նչը և ինչպե՞ս բարելավել ՀԿ-քաղաքացիներ և ՀԿ-պետական կառույցներ փոխգործողության մեջ, և ըստ այդմ ինչպե՞ս վերածնակվորել ներքին քաղաքականությունները:

Մեթոդաբանություն. Հետազոտությունը հիմնված է առաջնային և երկրորդային մի շարք տվյալների վերլուծության վրա, որում համադրված կիրառվել են որակական և քանակական մոտեցումները:

Առաջնային տվյալները հավաքագրվել են հետևյալ մեթոդներով.

- *Ֆոկուս խմբեր.* Իրականացվել է 5 ֆոկուս-խումբ երևանաբնակ երիտասարդների ներկայացուցչական խմբերի հետ (համամասնորեն ըստ սեռի, կրթության և Երևանի համայնքների): Հիմնական նպատակն է եղել վերհանել ՀԿ-ների մասին ընկալումները, վերաբերմունքը, առնչության փորձը, երիտասարդների համար ակտուալ խնդիրների և առաջնահերթությունների համատեքստում ՀԿ-ների ընկալվող դերը:

- *Հարցում.* Սոցիալ-հոգեբանական հարցումն իրականացվել է երևանաբնակ 100 երիտասարդների հետ (40 տղամարդ, 60 կին): Նպատակն է եղել ՀԿ-ների վերաբերյալ տեղեկացվածության և

սուբյեկտիվ գնահատականների (պատկերացումների, դիրքորոշումների, ներգրավվելու պատրաստակամության) չափելի բաղադրիչների, ինչպես նաև այդ պատկերացումների ձևավորման աղբյուրների դուրս բերումը:

- *Խորքային հարցազրույցներ* իրավապաշտպանության տարբեր ոլորտներում գործող ՀԿ ներկայացուցիչների հետ (ընդհանուր մարդու իրավունքներ, փոքրամասնությունների իրավունքներ, կանանց իրավունքներ, բնապահպանություն, մարդու իրավունքների հետազոտում/մոնիթորինգ): Հարցազրույցները կիրառվել են ՀԿ-ների դիրքավորումը, տեսլականները և հանրության հետ արդյունավետ աշխատանքում նրանց ռեսուրսներն ու խնդիրները պարզելու նպատակով:

Խնդիրների բացահայտման և իրավիճակի նկարագրության համար իրականացվել է ՀՀ-ում ՀԿ սեկտորի խնդիրների վերաբերյալ հետազոտությունների և վերլուծական զեկույցների, ինչպես նաև ՀՀ-ում ՀԿ դաշտը պետականորեն կարգավորող փաստաթղթերի վերլուծություն: *Իրավիճակի վերլուծության* օժանդակ նյութ են ծառայել սոցիալական մեդիայում և տարբեր մամակագրական խմբերում ՔՀ կառույցների և այլ կողմերի միջև ինտերակցիաները, նրանց մասին և նրանց կողմից տարածվող նյութերը:

Գրականության վերլուծության մեջ ներառվել են քաղաքացիական հասարակության և ՀԿ սեկտորի ժամանակակից ուսումնասիրությունները, այդ թվում՝ հետխորհրդային երկրներին և Հայաստանին առնչվող:

ԳԼՈՒԽ 1

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ և ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ԽՆԴՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ և ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Քաղաքացիական հասարակությունը, ՀԿ սեկտորը և դրա ընկալումները Հայաստանում. սկզբնավորումը և ներկա իրավիճակը

ՀԿ-ների հանրային ընկալմանը վերաբերող քաղաքականության վերլուծությունը ենթադրում է մի շարք փոխկապված հարցերի քննարկում.

- Ինչպիսի՞ն են այդ փոխադարձ ընկալումները՝ և՛ գիտելիքի, և՛ վերաբերմունքի իմաստներով: Ի՞նչ խնդիրներ կան դրանցում:
- Կա՞ն արդյոք ձևակերպված մեխանիզմներ՝ մոտեցումներ, որոնցով ՀԿ-ներն առաջնորդվում են հանրության լայն շերտերի (ոչ միայն իրադրային շահառուների կամ իրենց գործունեությանը ծանոթ մտերիմների) հետ առնչվելիս, որո՞նք են դրանք:
- Արդյոք այդպիսի մոտեցումների մշակման կամ բարելավման կարիք կա՞, և եթե այո, ապա ինչպիսի՞ն պետք է լինեն դրանք:

Վերլուծության սկզբնակետն այն է, որ ՀԿ-ներ հանրություն հարաբերություններում գոնե երեք փոխազդող սուբյեկտներ են ներգրավված. ՀԿ-ներ (մասնավորապես ՄԻ/ԻՊ⁹), քաղաքացիներ (պոտենցիալ ակտիվ՝ տեղեկացող հատվածը) և պետություն/կառավարություն¹⁰ (ընդհանուր համակարգի և առանձին կառույց-

⁹ Մարդու իրավունքների պաշտպանության/իրավապաշտպանական:

¹⁰ Երկու բառերը տեքստում կհանդիպեն միասին կամ փոխարինաբար, քանի որ հետազոտված խնդիրներն առկա են տարբեր պետական, այդ թվում՝ կառավարական ինստիտուտների հետ հարաբերություններում, և հարցված

ների իմաստներով): Այսպես, կառավարությունը պաշտոնական և ոչ պաշտոնական միջոցներով (ԶԼՄ, որոշումներ, պրակտիկաներ) ներգործում է ինչպես մարդու իրավունքների գաղափարի, այնպես էլ ՄԻ ՀԿ-ների հանրային ընկալման վրա: Վերջիններս իրենց հերթին ազդում են (հանրության տարբեր շերտերի վրա տարբեր չափով) պետության և դրանում սեփական դերի մասին քաղաքացիների դիրքորոշումների վրա: Եվ վերջապես, քաղաքացու սոցիալ-մշակութային «պրոֆիլը» ևս կարևոր դեր ունի նրանում, թե ինչպես երկրում կձևավորվեն ու կգործեն ֆորմալ և ոչ ֆորմալ կառույցները, ինչ ձև և ծավալ կստանան ժողովրդավարացմանն ուղղված գործընթացներն ու որոշումները:

ՀԿ-ների հանրային ընկալման խնդիրների ձևավորիչ գործոնները պետք է փնտրել Հայաստանում ՀԿ դաշտի սկզբնավորման փուլերում: Քաղաքացիական գործընթացների պատկերն այսօր Հայաստանում շատ առումներով փոխված է, բայց կարևոր է հաշվի առնել, որ հանրային դիրքորոշումների վրա շարունակում է ազդել ՀԿ-ների հենց նախնական ընկալումը: ՀԿ սեկտորի գործառնության և դրա հասարակական ընկալման խնդիրներն ուժգանում են խորհրդային համակարգի ժառանգությամբ երկրներում, որի հետևանքով ինչպես նոր ինստիտուտներն ու քաղաքականություններն են դժվար «դրվում» նախկինների վրա, այնպես էլ հին գաղափարները՝ նոր գաղափարների վրա: Մ.Հովարդը, ուսումնասիրելով հետկոմունիստական Եվրոպայի երկրներում ցածր քաղաքացիական մասնակցությունն ու թույլ քաղաքացիական հասարակությունը՝ չնայած գործող կազմակերպությունների աճող թվին, հանգում է կոմունիստական ժառանգությունից բխող երեք հիմնական պատճառների: Դրանք են՝ ա). կազմակերպություններին պարտադիր (հետևաբար՝ ֆորմալ, ոչ կամավոր) անդամակցության կոմունիստա-

երիտասարդների ու ՀԿ անդամների կողմից կիրառվել են առանց էական իմաստային տարանջատման:

կան փորձը, ք). դրան զուգահեռ ձևավորված ամուր և մինչ այժմ կենսունակ ոչ ֆորմալ (մասնավոր) կապերը, որոնք ապամոտիվացնում են ֆորմալ միավորումներին մասնակցությունը, գ). Շարունակական և մեծ հիասթափությունը ԽՍՀՄ փլուզումից ի վեր ծավալված քաղաքատնտեսական զարգացումներից (Howard 2003): Այս երեք գործոնները, անհատական ապրումների մակարդակում ամրապնդվելով, ունենում են տևական և փոխադարձ ուժեղացնող նեգատիվ ազդեցություն կազմակերպություններին քաղաքացու մասնակցության վրա, դիստանցում նրան հանրային ոլորտից:

Անդրադառնալով Հայաստանում և այլ խորհրդային երկրներում ՀԿ սեկտորի ձևավորման խնդիրներին 1990-ականներից ի վեր՝ մի շարք հեղինակներ իրավացիորեն նշում են դրանց վրա միջազգային կառույցների մոտեցման ոչ միանշանակ ազդեցությունը և: Իշխանյանի դիտարկմամբ՝ ՔՀ ինստիտուտների միջոցով ժողովրդավարություն, ուժեղ քաղաքացիական հասարակություն և մասնակցություն խթանելու գաղափարը, որին ձեռնամուխ եղան միջազգային կառույցները, ենթադրում էր ՀԿ-ների աջակցություն և դրանց թվի արագ աճ հետխորհրդային տարածքում, որից բացառություն չէր նաև Հայաստանը (Ishkanian 2006, 2009): Իշխանյանն առաջ է քաշում այն դրույթը, որ այդ գործընթացին ուղղված քաղաքականությունների ու պրակտիկաների վրա ազդեց Սառը պատերազմի գաղափարախոսությունը: Այսպես, կոմունիզմի փլուզումից առաջ ստեղծված ցանկացած բան, այս դեպքում՝ ՔՀ-ը, սկսեց ընկալվել որպես կոմունիզմով աղճատված, «ոչ իսկական», որը և պետք էր «մաքել» իրական ժողովրդավարության հասնելու համար: Հայաստանում այս մոտեցումը հանգեցրեց քաղաքացիական հասարակության յուրահատուկ՝ «գենետիկորեն մշակված» մոդելի, որը «սնուցված էր աճի հորմոններով»՝ միջազգային ֆինանսավորմամբ, և սկսեց հետ մղել տեղաբնիկ, մինչ այդ դաշտում գործող քաղաքացիական տարրերը (Ishkanian 2009: 10): Քննարկելով ԱՄՆ դոնորների դերը 1990-ական-

ներին հետխորհրդային երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի «ՀԿ-ացման» հարցում՝ Ակսարտովան նշում է, որ ՔՀ և ՀԿ-ներ հասկացությունների նույնացումը հենց դոնորների դիրքորոշումից և մոտեցումներից էր բխում: Ըստ նրա, քաղաքացիական հասարակությունն օպերացիոնալ սահմանման մակարդակում հանգեցված էր ՀԿ-ներին երկու հիմնական պատճառով. բացի նրանից, որ դրանք բյուրոկրատական առումով հարմար էին դոնորների ֆինանսավորման սխեմաներին, նույն տարիներին ՀԿ-ները հենց ԱՄՆ-ում ընկերակցական գործունեության գերակշռող ձև էին դարձել (Aksartova 2006): Այս փուլում, փաստոեն, ՔՀ-ը սկսեց հանգեցվել մասնագիտացված ծառայություն կամ շահապաշտպանություն իրականացնող ՀԿ-ների, ինչն ինքնին վատ չէր: Խնդիրն այն է, որ ՀԿ-ները ՔՀ միակ բաղադրիչը չեն: Ինչպես Իշխանյանն է եզրակացնում Հայաստանի դեպքում, «անշուշտ, դա ուժեղ ՀԿ սեկտոր է, բայց ուժեղ քաղաքացիական հասարակություն չէ» (Ishkanian 2009: 10): Վերջին տարիների միտումը անցումն է քաղաքացիական հասարակության նոր՝ *civil society 2.0*¹¹ ձևի, որտեղ կարևոր է դառնում ոչ թե հաստատությունը, այլ մարդկանց ոչ ֆորմալ միավորումները և օնլայն մեդիա-հարթակներում կազմակերպված գործողությունները, ինչը նշանակում է, որ քաղաքացիական սեկտորին աջակցելու ձևաչափերն ու պրոցեդուրաները ևս էական վերանայման կարիք ունեն: Ինչևէ, այս ինստիտուցիոնալ ընկալումը դեռևս գերիշխում է, և դոնոր կառույցների ծրագրային լեզվի մակարդակում ՔՀ-ը հանգեցվում է գործող ու ֆինանսավորվող ՀԿ-ներին: Շարունակում է գերիշխել ՀԿ-ների նորմատիվ մոդելը, որը հանդիսանում էր քաղաքականություն մշակողների և դոնորների ուղենիշը 1990-ականներին (Ishkanian 2009, 2012): Ոչ միայն աջակցության և զարգացման միջազգային կառույցների մոտեցումներում,

¹¹ Հասկացության սահմանումների համար տե՛ս, օրինակ, <http://tech.state.gov/profiles/blogs/what-is-civil-society-20>, <http://www.penultimosdias.com/wp-content/uploads/2011/01/hoffman.pdf>:

այլև գրականության մեծ մասում քաղաքացիական ինստիտուտների դրական դերը մի տեսակ չվիճարկվող կանխադրույթ է:

ՀԿ-ների՝ որպես դեմոկրատական ինստիտուտների, տեսական քննադատությունները դուրս են այս վերլուծության բուն նպատակներից: Ինչևէ, հետազոտության շրջանակներում ևս օգտակար են մի քանի քննադատական հարցեր, որոնք կարող են նպաստել ռեֆլեքսիային և գործողությունների ճշգրտմանը: Այսպես, որքանո՞վ են դրանք ներկայացնում հանրության խնդիրները և արծազանքում դրանց, որքանո՞վ են «ընկալունակ ընկալումների հանդեպ», որքանո՞վ են հաջողում հասկանալի դառնալ լայն շերտերի համար, որքանո՞վ են իրենք ճանաչում և ընկալում հասարակությունը, և ի վերջո՞ արդյոք դրական հանրային կերպարը ՀԿ-ների արդյունավետ գործունեության համար էական է, և որքանո՞վ: Լայն իմաստով քննադատական հայացքն անհրաժեշտ է ՔՀ սեկտորը ներկայացնողներին և ուսումնասիրողներին՝ որպես ռեֆլեքսիայի հնարավորություն և սթափեցնող հիշեցում, որ ակտիվ ՔՀ և երկրում ժողովրդավարական կարգ հաստատելու միջև կապն ուղիղ չէ:

Ուսումնասիրելով ՀԿ-ների մասնակցությունը Հայաստանում աղքատության նվազեցման ռազմավարական ծրագրի գործընթացին՝ Իշխանյանն իր հողվածում հարցադրում է, թե արդյոք այդպիսի նախաձեռնություններում իրենց մասնակցությամբ ՀԿ-ները կարողացել են դեր խաղալ երկրում լավ կառավարման և կայուն զարգացման, սոցիալական վստահության բարձրացման գործում: Վերլուծելով աղքատության նվազման ծրագրի իրականացման փուլում ՀԿ-ների դրսևորած մոտեցումները՝ նա առանձնացնում է երեք տիպի դիրքավորում՝ «ներառում», «արտամղում» և «հիբրիդ»: Նա ցույց է տալիս, թե ինչպես են այս դիրքերն (stances) ազդում քաղաքականությունների վրա ազդելու՝ ՀԿ-ների ունակության վրա

Հայաստանում (Ishkanian 2006¹²): Այս հասկացություններն օգտակար են մեր վերլուծության փոխկապակցված հարցերը քննարկելու համար, այն է. հանրության հետ սոցիալական դիստանցիայի (Մենք-ի տարածքում գտնվելու կամ չգտնվելու) հարցերը և ՀԿ սեկտորի արդյունավետությունը՝ քաղաքականության վրա ազդելու ներուժի առումով: Օգտակար է նաև Իշխանյանի՝ ավելի վաղ տարիներին արած այն դիտարկումը, որ դոնորների միտումը՝ փոփոխել ֆինանսավորման առաջնահերթությունները, սահմանափակում է տեղական ՀԿ-ների հնարավորությունը՝ իրականացնել երկարաժամկետ ծրագրեր, քանի որ այս խմբերը մշտապես ստիպված են լինում փոփոխել ու հարմարեցնել իրենց դիսկուրսները և նախագծերը՝ տեղական համայնքների կարիքներից ելնելու փոխարեն (Ishkanian 2006): Սա, կարելի է ասել, լրացուցիչ գործոն է համայնքների կողմից ՀԿ-ների «մերոնքական» չընկալվելու համար:

2008-ի հետընտրական մարտը և դրան հաջորդած զարգացումները Հայաստանում հատուկ նշանակություն ունեցան: Մարդու իրավունքների հիմնահարցերի և դրանց համար պայքարող իրավապաշտպան անհատների, խմբերի և ՀԿ-ների նկատելի ակտիվացում տեղի ունեցավ հենց այս փուլում: Գործընթացը ներառում էր բազմաթիվ հիմնարար իրավունքների հարցեր, և առաջ բերեց, չնայած ճնշումներին կամ հենց շնորհիվ դրանց, ակտիվիզմի, նոր և տարբեր քաղաքացիական խմբերի, նրանց միջև ցանցերի և բանակառիվների ձևավորման գործընթացներ: Կարելի է ասել, որ քաղաքացիական ակտորներն ավելի հմտացան, որոշակիորեն ՀԿ ֆորմատից անցում արվեց նախաձեռնությունների ու ակտիվության «ոչ ձևայնացված» ձևերի: Անգամ կարելի է ասել, որ հենց այս փուլում տեղի ունեցավ գատորոշում միայն գրանցված և դաշտում գործելու

¹² Հասանելի է նաև օնլայն՝ http://eprints.lse.ac.uk/27386/1/%28Re%29claiming_the_emancipatory_potential_of_civil_society_a_critical_examination_of_civil_society_and_democracy_building_programs_in_Armenia_since_1991%28Isero%29.pdf

պատրաստ իրավապաշտպան ՀԿ-ների միջև, և գատորոշման հիմքը հետևյալն էր. արդյոք բացի ՀԿ լինելուց՝ անդամները գործում կամ խոստում էին հրապարակներում, և ի՞նչ էին խոսում ու անում: Այս փուլում նաև հասարակության լայն շերտերի համար մի շարք ՄԻ կառույցներ ու իրավապաշտպան անհատներ ավելի ծանոթ, ճանաչելի դարձան: Ջուզահեռաբար տեղի ունեցավ նաև արգելակող ազդեցություն հանրության քաղաքացիական գիտակցության զարգացման վրա, որը դեռ շարունակվում է: Չնայած քաղաքացիական հասարակության կառույցներն ավելի հմտացան, անվախացան, միջին քաղաքացու համար մարտիմեկյան իրադարձություններն ունեցան քաղաքացիական դիրքորոշումը նվազեցնող ազդեցություն՝ ձևավորված վախի և ուժեղ հիասթափության հաշվին: *Մարդու իրավունքների գաղափարի դյուրաբեկությունը նաև ազդեց ՄԻ կառույցների հանրային ընկալման վրա:* Կարելի է ենթադրել, որ հենց այս փուլում որոշակի հեռացում տեղի ունեցավ ՄԻ ՀԿ-ների և դրանց շահառուի՝ այդ իրավունքին չհավատացող շարքային քաղաքացու մեջ: Թերևս, այդ դիստանցիայի խորացումը և գաղափարի հանրային արժեզրկումը մնացին ՔՀ սեկտորի գործիչների կողմից չնկատված՝ ակտիվիզմի «նեղ իրականության» մեջ մնալու հաշվին, ուր խնդիրները գիտակցվում և քննարկվում են ինտենսիվ, սակայն ոչ համատարած կերպով: Վերջին մի քանի տարիներին հանրային կարևորության խնդիրներով զբաղվող տարբեր քաղաքացիական խմբերի և պետական որոշումներ կայացնողների միջև ընդհարումներն ավելի հաճախակի ու ակնհայտ են դառնում: Սակայն պարզ չէ, թե ինչ հետևությունների են բերում դրանք շարքային քաղաքացուն:

Այսպիսով, մինչ այժմ գրականության և հայաստանյան իրավիճակին անդրադարձը վեր է հանում, որ ՀԿ սեկտորի՝ քաղաքականությունների վրա ազդելու հաջողության և ձախողման մի շարք գործոններ կան՝ դոմորների առաջնահերթություններ, խորհրդային ժառանգություն, ներքաղաքական գործընթացներ և անգամ՝ հանրության գաղա-

փարական ու հուզական դրմինանտներ: Առանձին գործոն է, անշուշտ, նաև ՀԿ-պետական կառույցներ հարաբերությունը, որին առանձին կանդրադառնանք ստորև:

1.2. Կառավարություն և ոչ կառավարական կազմակերպություններ. հարաբերությունների այլընտրանքներ և հայաստանյան իրավիճակ

Պետություն-ՀԿ սեկտոր հարաբերությունները, այսպես թե այնպես, որոշակի լարում են պարունակում: Այն առկա է, ակնհայտ կամ լատենտ, նույնիսկ ժողովրդավարական համակարգերում գործող համագործակցային հարաբերություններում (Najam 2000, Young 1999, Young 2002, Anjum 2010): Լարումը բխում է հենց այս կառույցների էությունից, հանդիսանում այդ հարաբերությունների որոշիչ հատկանիշը, քանի որ փոխադարձ վերահսկողություն և սահմանափակում է ենթադրում: Որոշ վերլուծաբաններ քաղաքացիական կառույցներ-պետություն հարաբերության մեջ նախապատվությունը տալիս են վերջինիս՝ որպես ավելի կարևոր դեմոկրատական օղակ: Քննարկվում է նաև այն հարցը, թե ինչպես այդ հարաբերությունը դարձնել ավելի նպաստավոր՝ խուսափելով հավանական բախումից: Նաջամը (Najam 2000) առաջ է քաշում կառավարություն-ՀԿ-ներ հարաբերակցության «4C» մոդել, որի հիմքում ստրատեգիկ ինստիտուցիոնալ շահերի հայեցակարգն է: Հեղինակն առանձնացնում է 4 հնարավոր հարաբերություն՝ կախված այս երկու ակտորների նախընտրած քաղաքականությունների նպատակների ու միջոցների (չ)համընկնումից.

- *համագործակցություն (cooperation)*. նման նպատակներ, նման միջոցներ

- *բախում (confrontation)*. տարբերվող նպատակներ, տարբերվող միջոցներ
- *փոխլրացում (complementarity)*. նման նպատակներ, տարբերվող միջոցներ
- *կոոպտացիա (co-optation)*. տարբերվող նպատակներ և նման միջոցներ:

Այսպիսի մոտեցումն ավելի արդյունավետ է թվում, քանի որ կենտրոնում է դնում ոչ թե պարզապես կառավարության բնույթը (ժողովրդավարական կամ ավտորիտար), տնտեսական հյուսվածքը (լիբերալ շուկայական կամ վերահսկվող տնտեսություն) և, այլ շահերն այս երկու կողմերի հարաբերություններում: Որպես վերլուծության սխեմա՝ թույլ է տալիս նորոպի նայել քաղաքականությունների վրա ազդելու՝ ՀԿ սեկտորի հնարավորության և միջոցների խնդրին, սեկտորի հնարավոր զարգացումը և ուժեղացումը քննարկելիս հաշվի առնել այն անհամաչափություններն ու համընկնման կետերը, որ այն ունի պետության հետ Հայաստանում: ՀԿ-ների դերը քաղաքականություններում հատկապես արժևորվում է այն մոտեցումներում, որտեղ քաղաքականությունը դիտվում է ոչ թե պարզապես որպես բանիմաց պաշտոնյաների կողմից մշակված իրավական հրամանագրեր, այլ որպես այս կամ այն համայնքի կողմից որևէ նպատակի հասնելու գործընթաց, որպես փաստարկման և համոզելու գործընթաց (Majone 1989, Stone 1988¹³, մեջբերված ըստ Najam 2000: 4): Դժվար է տիպաբանել հայաստանյան իրավիճակն ըստ չորս մոդելներից որևէ մեկի, սակայն ՀԿ սեկտորի տարբեր ոլորտներում ու հատվածներում չորսն էլ տարբեր համամասնությամբ տեսնում ենք, իսկ մասնավորապես իրավապաշտպան սեկտորում գերիշխող մոդելին կանդրադառնանք վերլուծության արդյունքները քննարկելիս:

¹³ Majone, G. (1989) Evidence, Argument, and Persuasion in the Policy Process; Stone, D. Policy Paradox and Political Reason.

Քոսթոնն (1998) առաջարկում է մի շարք ցուցանիշներով (օրինակ՝ պետության կողմից ինստիտուցիոնալ պլյուրալիզմի ընդունում/չընդունում, ֆորմալության աստիճան ևն) պետություն-ՀԿ հարաբերությունները դիտարկել որպես սպեկտր, որտեղ համագործակցություն և ռեպրեսիա ծայրակետերի միջև հնարավոր են մի շարք միջանկյալ տարբերակներ: Նա նաև շեշտում է, որ ո՛չ ՀԿ սեկտորը, ո՛չ էլ կառավարությունը համասեռ կառույցներ չեն, և, օրինակ, վերջինս ունի ինչպես առավել ռեպրեսիվ, այնպես էլ ավելի համագործակցային կառույցներ (Coston 1998): McIoughlin-ն (2011) իրավացիորեն նշում է, որ չնայած զարգացող երկրներում ՀԿ-ներ-պետություն համագործակցության հետզհետե ավելի կարևորմանը՝ մինչ այժմ շատ քիչ էմպիրիկ հետազոտություն կա այն մասին, թե ինչ գործոններ են ազդում այդ հարաբերությունների դինամիկայի վրա, որը և ազդում է քաղաքականությունների ձևավորման վրա: Նա մատնանշում է, որ այդ դինամիկան կախված է մի շարք գործոններից, որոնց շարքում են հարաբերությունների ինստիտուցիոնալ և պատմական համատեքստը, ինչպես նաև հենց ՀԿ-ների բնույթը, և որ երկու կողմերի դերակատարներն էլ կարող են մի շարք մարտավարությունների, մանրների դիմել ներգործության սեփական տարածքի համար: Խոսելով ներկա միտումների մասին՝ Najam-ը (2000) նշում է, որ կառավարությունների և ոչ կառավարական սեկտորի միջև փոխգործողությունը հետզհետե մեծանում է, սակայն դա չի ենթադրում «գեղեցիկ ընկերություն», նպատակների ներդաշնակություն: Շատ երկրներում, մասնավորապես՝ հետխորհրդային տարածքի վաղ ժողովրդավարություններում, ականատես ենք ՀԿ սեկտորի րահսկողության խստացման և գործողությունների սահմանափակումների: «Մերձեցում» և «հեռացում» միտումների միաժամանակյա առկայությունը նաև նշանակում է, որ միատարր չեն ո՛չ ինքը՝ ՀԿ սեկտորը, ո՛չ էլ պետությունը, և դրանց տարբեր կառույցներ ու ոլորտներ թեև ենթարկվում են ընդհանուր տրամաբանության, սակայն աշխատում են տարբեր ոճերով: Ասվածը հիմնավորված է դարձնում

ՀԿ սեկտորի առանձին ոլորտների տարբերակված ուսումնասիրությունները, որոնք սակավաթիվ են նաև Հայաստանում: Մեր վերլուծության մեջ հեռացող և մոտեցող խցիկի սկզբունքով փորձել ենք դիտարկել ինչպես քաղաքացիական կառույցների գործառնության ընդհանուր համատեքստը, այնպես էլ կոնկրետ իրավապաշտպան ՀԿ-ների հետ պետության առնչության սպեցիֆիկ կողմերը:

Հայաստանում պետություն-ՀԿ-ներ հարաբերությունները սերտորեն կապված են ՀԿ-ների հանրային ընկալման հետ: Նախ, կառավարական դիսկուրսը մեծապես ազդում է հանրության ընկալումների վրա, այն կարող է ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ ֆորմալ մեդիայի միջոցով ամրապնդել որոշակի վերաբերմունք: Իրավիճակին նպաստում է նաև զլմ ազատության և անկախության խնդիրը երկրում, որի պարագայում քաղաքական և տնտեսական կոնյուկտուրայից դուրս մնացող սուբյեկտները, այս դեպքում՝ քաղաքացիական խմբերը, զլմ-ով իրենց նպատակները ներկայացնելու և առաջ տանելու խիստ սահմանափակ ռեսուրսներ ունեն¹⁴: Որպես սրա տրամաբանական շարունակություն՝ զլմ անկախության ցածր աստիճանը նպաստում է ՀԿ-ների հանդեպ ցածր վստահության (Lee et al 2010): Օրինակներից մեկը հատկապես «գրանտակերության» ու «գեների» շուրջ՝ գոնե մասամբ հաջողված նեգատիվ դիսկուրսներն են, որոնց ամրապնդմանը իրենք ՀԿ-ները նպաստել են առնվազն հակակշռող տեղեկատվություն չտրամադրելով: ՀԿ-ների հանրային ընկալման վրա պետության գործոնն ազդում է այլ առումներով ևս, ինչին կանդրադառնանք արդյունքների ամփոփման բաժնում:

Հարաբերությունների բնույթը հասկանալուն օգնում են նաև մի շարք գեկույցներ: Այսպես, Մարդու իրավունքների 2012թ. գեկույցից տեղեկանում ենք, որ շատ իրավապաշտպան ՀԿ-ների համար

¹⁴ Ժամակոչյան, Ա. (2012). ՋԼՄ բնութագիրը Հայաստանում. Լրատվամիջոցների ազատության խնդիրը, «21-րդ ՂԱՐ», # 6 (46), Երևան:

կառավարական գերատեսչություններից ավելի դժվար է ստանալ տեղեկատվություն բանտերի և դատարանների մոնիթորինգի համար, քան հենց ուղիղ դատարաններից¹⁵: Տեղեկատվությունը և այլ ռեսուրսները հաճախ ձեռք են բերվում ոչ ֆորմալ կապերի օգնությամբ, ինչը հաստատվում է նաև ՄԻ ՀԿ-ների ներկայացուցիչների հետ մեր հարցազրույցներում: Պետական պաշտոնյաներն ընդհանուր առմամբ չեն մերժում մոնիթորինգ իրականացնող ՀԿ-ների հետ հանդիպելու հայտերը և երբեմն հետևում են նրանց ներկայացրած որոշ առաջարկների, հատկապես սոցիալական ապահովության, կրթության և տեղական կառավարման հարցերին առնչվելու դեպքում¹⁶: Միևնույն ժամանակ, խիստ չարձագանքող են իրավապահ մարմինների կողմից իրականացվող շահարկումների և ճնշումների դեպքերում, ասել է թե՛ մարդու իրավունքներին ավելի կոնկրետ առնչվելիս:

Պետություն-ՀԿ սեկտոր հարաբերությունների կարգավորումը, որն ամրագրված է իրավական փաստաթղթերում (այդ թվում ՀԿ-ների մասին ՀՀ օրենքում¹⁷) պետք է որ այդ հարաբերությունները չդարձնե այդպիսին, ինչպիսին տեսնում ենք հիմա՝ կոնֆրոնտացիոն կամ գոնե խուսափողական: Օրենքով երաշխավորվում է հանրային հասանելիություն կառավարության տեղեկատվությանը, իսկ գործնականում շատ կառավարական մարմիններ ու պաշտոնյաներ ավելի քան դժկամ են այն ՀԿ-ներին տրամադրելու հարցում: Այսպիսով, ֆորմալ-իրավական փաստաթղթերից այն կողմ իրողությունն այն է, որ հատկապես ՄԻ ՀԿ-պետական կառույց ինտերակցիայում գերիշխում են լարումը, փոխխանգարող լինելու ընկալումը, իսկ եթե հարթ համագործակցություն է, դա նորից մտածելու տեղիք է տալիս:

¹⁵ Armenia 2012 human rights report (Country Reports on Human Rights Practices for 2012), United States Department of State, Bureau of Democracy, Human Rights and Labor.

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք.
<http://www.arlis.am/documentview.aspx?docid=337>:

Հարաբերությունների և ընկալումների մանրամասները թողել ենք հետազոտության տվյալների վերլուծության հետագա բաժնին:

1.3. ՀԿ-հասարակություն հարաբերությունները Հայաստանում. ուսումնասիրություններ և չդիտարկված ասպեկտներ

Քաունթերփարթ-Հայաստանի կողմից CIVICUS-ի հետ համատեղ¹⁸ իրականացված «Քաղաքացիական հասարակության ինդեքս» (CSI) հետազոտության արդյունքները ուշագրավ են և մեր խնդրի որոշ կողմեր թույլ են տալիս հասկանալ ցուցանիշներով: CSI մեթոդաբանությունը գնահատում է քաղաքացիական հասարակության վիճակը 5 առանցքային չափումների համաձայն.

- *Քաղաքացիական ներգրավվածություն.* անհատների ներգրավվածության աստիճանը սոցիալական և քաղաքական բնույթի նախաձեռնություններում:
- *Կազմակերպական մակարդակ.* քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալացված լինելու աստիճանը:
- *Արժեքների կիրառում.* քաղաքացիական հասարակության կողմից կարևոր արժեքներին հետամուտ լինելու աստիճանը:
- *Ընկալվող ներգործություն.* սոցիալական և քաղաքական դաշտի վրա ազդելու ունակությունն ըստ ներքին և արտաքին գնահատականների:


¹⁸ Հայաստանի քաղաքացիական հասարակությունը. անցումային փուլից դեպի համախմբում: Վերլուծական զեկույց (CIVICUS), Քաունթերփարթ Հայաստան, Երևան, 2010, <http://program.counterpart.org/Armenia/wp-content/uploads/2011/04/20.01.11-FFinal-ArmeniaCountryReport Arm- 3 .pdf>

• *Արտաքին միջավայր*. վերոնշյալ 4 չափումները վերլուծվում են այս վերջինի համատեքստում:

Ըստ հետազոտության արդյունքների, Հայաստանում բոլոր չափումներն ընդհանուր առմամբ միջին, չափավոր զարգացման մակարդակում են: Որոշ նրբերանգներ, այնուհանդերձ, կան: Մեր վերլուծության տեսակետից հատկապես հետաքրքիր են *քաղաքացիական ներգրավման* և *ընկալվող ներգործության* չափումները: Անկատարությունները, կարծես, հատկապես այս երկուսում են: Այսպես, *քաղաքացիական ներգրավման* մեջ արձանագրվել են նկատելի սահմանափակումներ, քաղաքացիների մասնակցության աստիճանը գնահատվել է խորը, բայց ցածր: Այսինքն, մասնակցողները քիչ են, թեև հաճախ և ինտենսիվ են մասնակցում: Ներգրավման ընդհանուր ցուցանիշը՝ հիմնված 6 ենթացուցանիշների վրա, կազմել է 37.4%¹⁹:

Ներգործության ընկալումը, որը սերտ կապ ունի մեր ուսումնասիրած խնդրի՝ հասարակության կողմից ՀԿ-ների ընկալելիության և նրանց հանդեպ վստահության աստիճանի հետ, բոլոր չափումների շարքում ունի ամենացածր ցուցանիշը: Այս չափորոշիչի ենթացուցիչների շարքում է քաղաքականության վրա ներգործությունը, որն, ինչպես երևում է ստորև մեջբերված տվյալներից, ցածր է հատկապես հենց ներքին գնահատականներով, իսկ արտաքին փորձագետները ՀԿ-ների այս կարողության հարցում կարծես ավելի լավատես են (տե՛ս Պատկեր 1): Այս պատկերը մասամբ բացատրում է այն, որ դոնորները շարունակում են իներցիոն կերպով քաղաքականության փոփոխության ազենտներ դիտարկել ՔՀ տարբեր ինստիտուտների, չնայած իրողությունն ավելի համեստ է, և հենց ներսի մարդիկ՝ ավելի թերահավատ:

¹⁹ Նույն տեղում, էջ 33:



Պատկեր 1. Ընկալվող ներգործության ենթաշախիրոշիչների ցուցանիշներն ըստ SCI հետազոտության, 2010²⁰

Սոցիալական ներգործության առումով արտաքին և ներքին գնահատականները շատ չեն տարբերվում և ընդհանուր առմամբ դրական են (40%-ից բարձր), ինչը ենթադրաբար նշանակում է, որ և՛ ՀԿ-ները, և՛ նրանց հետ համագործակցող միջազգային դոնոր կազմակերպությունները հասարակական կյանքի ու գիտակցության վրա ՀԿ-ների ազդեցությունը նկատելի են համարում: Սակայն հենց մեթոդաբանությամբ տրված է այն սահմանափակումը, որ այն ընկալվող ներգործությունը չափում է որպես ՀԿ-ների ու դոնորների ընկալումների ազդեցատ և չի ներառում այդ ներգործությունը կրող ու ՀԿ-ներին ընկալող անհատների տեսանկյունը: Ազդեցության հանգամանքը, մինչդեռ, փոխկապված է հանրային վստահության հարցերի հետ: Վստահության պակասը հաճախ զուգակցվում է դրական ազդեցության հանդեպ թերահավատ գնահատականների հետ: Հանրային վստահության համեստ չափը բացատրելիս ինչպես քննարկված հետազոտությունը, այնպես էլ շատ հեղինակներ նշում են խորհրդային ժառանգությունը: Մեր կողմից հարցված ՀԿ գործիչները ևս մատնանշում են այդ բացասական գործոնը, որը, սակայն, ՀԿ-ների հանրային ընկալման խնդիրների ողջ սպեկտրը չի բացատրում:

²⁰ Նույն տեղում, էջ 55:

Հետագա վերլուծության մեջ կփորձենք խորհրդային գործոնը դիտարկել մյուս «այստեղ և հիմա» գործոնների հետ համատեղ:

Ըստ 2007թ. իրականացված մի հարցման²¹, ՀՀ բնակչության միայն 18%-ն է վստահում ՀԿ-ներին, և պարբերաբար իրականացվող հետազոտություններն ուղղակիորեն կամ անուղղակիորեն շարունակում են մատնանշել վստահության հիմնահարցը տարբեր ինստիտուտների և խմբերի նկատմամբ²²: Այս առումով այսօր որոշակի դրական դինամիկա է արձանագրվել. ըստ այս հետազոտության, բնակչության արդեն 39.6%-ն է վստահում ՔՀ ինստիտուտներին, սակայն հարկ է հաշվի առնել, որ առանձին ՀԿ սեկտորը ներառում է համայնքային աջակցության ծրագրերից մինչև ՄԻ պաշտպանություն, և պարզ չէ, թե ստացված տոկոսը որքանով է բնութագրում, օրինակ, ՄԻ ՀԿ-ների հանդեպ վերաբերմունքը: Վստահության հարցերին է առնչվում նաև վերջին տարիներին իրականացված մեկ այլ հետազոտություն՝ ՔՀ հակակոռուպցիոն գործունեության հանրային ընդունելությունը, որի համաձայն՝ մարդիկ ընդհանուր առմամբ դրական են գնահատում ՀԿ-ների հակակոռուպցիոն ներգրավվածությունը, սակայն այդ վերաբերմունքը հիմնված չէ ՀԿ-ների վերաբերյալ կոնկրետ գիտելիքի կամ նրանց հետ առնչության փորձի վրա: Հեղինակը սա անվանում է քաղաքացիական հասարակության «մակերեսային հավանություն» (shallow support) (Paturyan 2009): Համանմանորեն, մեր հարցումները և ֆոկլուս-խմբերը թույլ են տալիս ՄԻ ՀԿ-ների հանդեպ վստահությունն անվանել «պասիվ». անգամ ՀԿ-ների նպատակներին վստահելու պարագայում մարդիկ հակված չեն հավատալ արդյունքներին և պատրաստակամ չեն ներգրավվել:

²¹ Հանս Գուբերդ (2008). «Տվյալների հավաքագրման նախաձեռնություն - 2007», ՀՈԿԿ, մեջբերված ըստ Քաունթերփարթ-Հայաստան 2010 զեկույցի

²² Տե՛ս, օրինակ, 2011 *Social Cohesion Survey*. CRRC-Armenia, UNDP, 2011. http://www.crrc.am/hosting/file/static_content/projects/social_cohesion_survey/CRRC_UNDP_SocialCohesion%20Presentation_English.pdf; *Armenia: Social Protection and Social Inclusion. Country Report*. European Commission, CRRC-Armenia, 2011.

Քաունթերփարթ Հայաստանի կողմից իրականացված մեկ այլ՝ SFA (սոցիալական զորեղության վերլուծություն) կոչվող հետազոտությանը²³, որով դուրս էր բերվում երկրում ազդեցիկ ակտորների վիզուալ քարտեզը, տեսնում ենք, որ այլ ազդեցիկ դերակատարների հետ համամասնության մեջ ՔՀ սեկտորը բավական փոքր, ծայրամասային, թույլ կազմակերպված և մեկուսի է: Հետաքրքիր է, որ մեկ այլ՝ արդեն ներքին քարտեզում, որտեղ պատկերված են ՔՀ ներսում կառույցներն ըստ ազդեցության համամասնության, GONGO-ները (ծածուկ կամ ակնհայտ պետական աջակցությամբ գործող) ավելի մեծ տարածք են զբաղեցնում, քան բուն շահույթ չհետապնդողների սեկտորը:

Վերը քննարկված տվյալները ստացված էին մեթոդապես բավական մշակված ու բազմակողմ հետազոտությամբ, և այդուհանդերձ, դրանում կարծես բաց է թողնված քաղաքացու հեռանկարը: Վերջինս դիտարկվում է որպես սեկտորի հատկանիշ, ոչ թե հարաբերության կողմ՝ այդպիսով վերարտադրելով *քաղաքացիական հասարակությունն առանց հասարակության* դիտարկելու միտումը: Ի տարբերություն պետություն-ՀԿ-ներ հարաբերության խնդրի՝ ՀԿ-ներ-քաղաքացիներ հարաբերությունները զրականության մեջ, այդ թվում՝ քաղաքականության վերլուծություններում, բավարար քննարկված չեն: Այս հարաբերությունները հասկանալու էմպիրիկ աղբյուրը վստահության հետազոտություններն են, իսկ դրանք անուղղակի ու մասնակի աղբյուր են:

Քննարկման այս բաժինը կարող ենք ամփոփել հետևյալ նկատառումներով.

²³ Տե՛ս Հայաստանի քաղաքացիական հասարակությունը. անցումային փուլից դեպի համախմբում. վերլուծական զեկույց (CIVICUS), Քաունթերփարթ Հայաստան, Երևան, 2010, http://program.counterpart.org/Armenia/wp-content/uploads/2011/04/20.01.11-FFinal-ArmeniaCountryReport_Arm-3_.pdf, էջ 30

- ՀԿ-հասարակություն հարաբերությունների բնույթը կախված է նաև պետությունից՝ որպես համակարգից և առանձին կառույցների պրակտիկաներից:

- ՀԿ-ների ոչ միանշանակ հանրային ու պետական ընկալումը ոչ միայն հայաստանյան, այլև համընդհանուր խնդիր է: Սակայն այն Հայաստանում ունի իր սպեցիֆիկ բարդությունները, որոնք հետադարձ կերպով ազդում են ՀԿ-ների արդյունավետության և քաղաքականության վրա ազդելու հնարավորության վրա:

- ՀԿ-ները և միջազգային կառույցները, ինչպես նաև վերլուծական գրականությունը բավարար կերպով չեն անդրադառնում ՔՀ սեկտորի հանրային ընկալմանը և քաղաքացուն՝ որպես դերակատարի: Այս ասպեկտը մեր սոցիալ-հոգեբանական վերլուծության բաղադրիչներից մեկն է, որը կմանրամասնենք հաջորդ՝ էմպիրիկ տվյալների քննարկման մասում:

ԳԼՈՒԽ 2

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ և ԱՅԼՈՆՏՐՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

2.1. Հարցագրույցներ մարդու իրավունքների ՀԿ ներկայացուցիչների հետ. ՀԿ սեկտորի տեսակետները և անտեսած կետերը

Այս բաժնում վերլուծված են հասարակություն-իրավապաշտպան ՀԿ-ներ փոխադարձ ընկալումներին վերաբերող այն խնդիրներն ու դրանց վրա ազդող գործոնները, որոնք հիմնականում դուրս են բերվել ՀԿ ներկայացուցիչների տեսակետների հիման վրա: Վերհանված խնդիրներն առանձնացրել ենք ըստ մի քանի ոլորտների:

Ընդհանուր հասարակական խնդիրներ (խնդիրներ հասարակության կողմից)

Գրագիտության և իրագեկվածության պակաս, իրական գիտելիքի դեֆիցիտ. ՀԿ ներկայացուցիչները հաճախ են մատնանշել այն խնդիրը, որ ՄԻ-ին առնչվող առանձին թեմաներին բացասական արձագանքը և իրավապաշտպան ՀԿ սեկտորի բացասական ընկալումները բխում են գիտելիքի պակասից՝ և՛ շահապաշտպանության թեմայի, և՛ խմբերի վերաբերյալ, և սա, իր հերթին, բխում է հանրության ընդհանուր գրագիտության ոչ բավարար մակարդակից: Ժամանակակից խնդիրների, թեմաների չիմացությունը քողարկված է գրագետ, բարձրագույն կրթության ձգտող հասարակության մասին դեռևս շահարկվող չափազանցված պատկերացման, հարցվողներից մեկի որակմամբ՝ «թվայցյալ գրագիտության» հետևում: Առկա են նոր գիտելիքի կամ տեսակետի հանդեպ դիմադրություն, կարծրացած

պատկերացումներ, որոնց հետևանքով մարդու իրավունքների ոլորտի շատ խնդիրներ տեղափոխվում են (ան)բարոյականության դաշտ, գնահատվում էթնո-ազգային ինքնընկալման տեսակետից:

Մարդու իրավունքների նեղ-անհատական և ոչ ունիվերսալ ընկալումներ. հանրային մտածելակերպի պակաս. Մարդու հիմնարար իրավունքները՝ որպես հանրային կյանքի կարևոր սկզբունք, ամբողջապես յուրացված չեն հասարակության մեջ. մարդիկ այն չեն ընկալում, քանի դեռ իրենց չի «կանում»: Իրավապաշտպաններից մեկի փոխանցմամբ, քաղաքացիները հաճախ են արդարացում ուժային կառույցների բռնությունները («անկապ տեղը չեն ծեծի», «որ չճնշեն՝ ոնց իմանան՝ ով է եղել» տիպի դատողություններով), քանի դեռ իրենք անձամբ կամ հարազատները դրանց չեն բախվել: ՄԻ ՀԿ-ներին դիմելն, այդ իսկ պատճառով, *վերջին հանգրվանն է մարդկանց մեծ մասի համար, երբ սպառվում ու անարդյունավետ են լինում ավելի ավանդական նեղ-միջավայրային՝ ծանոթի, կաշառման կամ այլ միջոցները. «Երբ դեմ են առնում պետական մեքենային, նախ ծանոթ են ման գալիս, հետո փող են սկսում խաղացնել, հետո սկսում են հավատալ պետությանը, հետո գալիս են մեզ մոտ»* (իրավապաշտպան ՀԿ ներկայացուցիչ): Վերջին հերթին դիմելու համատարած բնույթը հաստատվում է նաև ֆոկլուս-խմբերի արդյունքներով. ՀԿ-ներն այն կառույցների շարքում չեն, որոնց երիտասարդները հավանաբար կդիմեն: Իհարկե, մարդու իրավունքների նման արժեզրկված և իրավիճակային ընկալումը պայմանավորված է մի շարք գործոններով, ինչպիսիք են ներքաղաքական գործընթացները, քաղաքացիական հիմնարար իրավունքը՝ ընտրությունը ռեալիզացնելու և դրա արդյունքը տեսնելու ձախողումը, իրավական մեխանիզմների հանդեպ թերահավատությունը՝ մշակույթում ոչ ֆորմալ կանոնների վրա հենվելուն զուգընթաց և այլն: Ինչևէ, քաղաքացիական արժեքների ֆրագմենտար և ոչ համահասարակական յուրացման մեջ մեղքի բաժին ունեն նաև հենց ՄԻ ՀԿ-ները, որոնք հակված են

աշխատել ու շփվել հասարակության միայն արդեն իսկ զգայուն, տեղեկացված շերտերի հետ՝ չփորձելով զանգվածային PR միջոցներով ընկալունակ դարձնել դեռևս իներտ հատվածին՝ նրանց համար հասանելի հասկացություններով ու բառապաշարով: Հասարակությունը, մեկ այլ ՀԿ ներկայացուցչի դիտարկմամբ, դեռևս սահմանափակ պոտենցիալ ունի քաղաքացիական դիսկուրսը յուրացնելու, բայց այդ «սահմանափակության վրա ազդում է հենց ՀԿ-ների դիսկուրսը»: Այս հետազոտական արդյունքին համահունչ է Թրանսփարենսի Ինթերնեշնլի ՀՀ-ում ՀԿ-ների զարգացման հնարավորություններին վերաբերող զեկույցի այն դիտարկումը, որ, ՀԿ-ների կարծիքով, հանրության կողմից ոչ կառավարական հատվածի նկատմամբ առկա անվստահությունը կապված է մարդկանց պասիվության, անտարբերության և սեփական իրավունքների ու ազատությունների վերաբերյալ քիչ իրազեկված լինելու հետ²⁴: Այստեղ ևս երևում է, որ ՀԿ-ներն արձանագրում են փաստը, բայց այն հիմնականում նշում են որպես պատճառաբանություն՝ չքննարկելով սեփական մասնակցությունն իրավիճակին:

Ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակ և անապահովություն.

ՀԿ սեկտորով ցածր հանրային հետաքրքրվածության վրա ազդում են նաև քաղաքացիների ընդհանուր սոցիալական-տնտեսական անբարենպաստ վիճակը, աղքատությունը, զբաղվածության պակասը: Պարզ ասած՝ մարդիկ ավելի հրատապ և ժամանակատար խնդիրներ ունեն, որոնց ֆոնին հասարակական կյանքով և հատկապես կառույցներով բարձր հետաքրքրվածություն սպասելը տեղին չէ: Որոշ դեպքերում այս գործոնը հանգեցնում է նաև բացասական վերաբերմունքի այն բանի հաշվին, որ ՀԿ-ներն ընկալվում են որպես

²⁴ Հայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորությունները և ռիսկերը, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Երևան 2011,

http://transparency.am/files/publications/NED_publication_arm_3.pdf:

գրասենյակներ, որտեղ մարդիկ վատ չեն վաստակում առանց մեծ ջանքերի: Իսկապես, սոցիալական անապահովության բարձր աստիճանը և բազային անվտանգության առօրյա մտահոգությունները ևս մի գործոն են, թե ինչու է շարքային քաղաքացու համար ՀԿ սեկտորը, նույնիսկ իր իրավունքները պաշտպանող սեկտորը, ընկալվում որպես իր խնդիրներից հեռու ոլորտ՝ իրեն չհասկացող և իր համար անհասկանալի: Թերևս, հատկապես այն բանից հետո, երբ ՀԿ-ները սկսեցին նվազեցնել ուղիղ նյութական աջակցության ծրագրերը՝ ելնելով դրանց կարճաժամկետ արդյունքներից, այդ ընկալումը «սպասող» ժողովրդի կողմից ավելի մեծացավ: Սա կապված է նախորդ կետի հետ, գործում է «ինձ համար ի՞նչ են արել» մտայնությունը, ՀԿ-ների նախորդ դրական-բարեգործական կոնցեպտը դեռևս չի փոխարինվել ավելի հասուն՝ մասնակցային ընկալմամբ:

Խորհրդային ժառանգություն. Նույնիսկ կառավարությունից և պետությունից նկատելի օտարվածության ու սոցիալական դժգոհության պարագայում շարքային քաղաքացին շատ ավելի հակված է հույսը դնել պետության վրա, ավելի քիչ վստահել ՀԿ-ներին: Այս հանգամանքը պայմանավորված է խորհրդային ժառանգության մտածելակերպով, որի հաշվին առկա է պետության հանդեպ իներցիոն, թեկուզ և վերացական վստահություն: Խորհրդային փորձի նկատելի բացասական ազդեցությունը ՀԿ սեկտորի և իրավապաշտպանության ընկալելիության վրա նաև այն է, որ ՀԿ-ները, որպես ոչ պետական, առավելապես ընկալվում են որպես «բիզնես-պրոյեկտ»:

Ղրական միտումներ հասարակությունում. Չնայած գերիշխող պասիվ պատկերին և վերը նշված խնդիրներին՝ փոփոխության որոշ միտումներ նկատելի են: Մարդիկ «...սկսել են ասել բաներ, որ չէին ասում, սկսել են խոսել իրավունքներից» (ՀԿ ներկայացուցիչ): Նոր սերունդը, որը ծանրաբեռնված չէ խորհրդային ժառանգությամբ, անկախ սեփական վերլուծականության մակարդակից՝ յուրացնելու է

քաղաքացիական արժեքները, քանի որ արդեն նոր իրականության դաշտում է ապրում: Հարցվողների կողմից նշվել է նաև, որ նախորդ տարիների համեմատ փոքր-ինչ ավելի դրական են ընկալվում ՄԻ ՀԿ-ները, այդ թվում՝ փոքրամասնությունների իրավունքներով զբաղվող: Նշենք նաև, որ այս ամփոփման համար հիմք հանդիսացող հարցազրույցներն իրականացնելուց անցել է մոտ երկու տարի, որի ընթացքում փոփոխության միտումներն ավելի նկատելի են դարձել: Հատկապես վերջին երկու տարիները խիտ են եղել շարունակ ծավալվող քաղաքացիական գործընթացներով (նոր հանրային բողոքներ, սոցիալական շարժումներ), և այդ ընթացքում, իսկապես, կարծես թե հաճախացել ու բովանդակություն է ստացել քաղաքացիների հղումը սեփական իրավունքին, ինչը կարող է և ազդած լինել նաև իրավունքների պաշտպանության ոլորտում գործող կառույցների հանդեպ վերաբերմունքի վրա:

Խնդիրներ իրավապաշտպան ՀԿ սեկտորում

Համապատասխանության և վստահելիության խնդիրներ. Քաղա-

քացիական հասարակության մաս են ոչ բոլոր ՀԿ-ները, այլ նրանք, որոնց գործունեությունը և գաղափարական հենքը ոչ միայն չեն հակասում, այլև, ըստ էության, համապատասխանում են մարդու իրավունքների կոնցեպցիային: Իսկ անհամապատասխանություններ առկա են. դրանք երբեմն զավեշտալի ձև են ստանում, երբ, օրինակ, ՄԻ ոլորտի ՀԿ ներկայացուցիչը սկսում է ցանցային նամակագրության մեջ հորդորել այս կամ այն սպեցիֆիկ խմբի շահապաշտպանությունից հետ կանգնել՝ մեջբերելով կառավարական դիսկուրսին բնորոշ ազգային անվտանգության կամ այլ փաստարկներ: Հենց իրավապաշտպան ՀԿ դաշտում քիչ չեն խորհրդային, կարծր և ուղղահայաց ոճով աշխատող, «դու ո՞վ ես, որ մեզ սովորեցնես» դիրքորոշումով ՀԿ-ներ, որոնց սեփական աշխատանքային միջավայրում ժողովրդավարություն չի կիրառվում, դրանում կարող են տեղ գտնել կոռուպցիա,

բռնություն: Սա մատնանշել են ներքին դաշտին իրազեկ իրավապաշտպանները: Փաստորեն, նրանք չեն դավանում այն արժեքները, որոնք ներկայացնում են և որոնք ներկայացնելով ֆինանսավորվում են՝ օգտվելով ժողովրդավարության ամրապնդմանը հատկացվող ռեսուրսներից: Քաղաքացին այս ներքին «կյանքը», անհամապատասխանությունները չի տեսնում, սակայն վերջիններս ունենում են իրենց ազդեցությունը հանրային ընկալման վրա, քանի որ արդյունքում տեսանելի չէ համապատասխանությունը, որի դեպքում պիտի ավելի ներկայացված զգար սեփական խնդիրները: ՀԿ-ների ձևական գործունեության տպավորությունը, որն օբյեկտիվ օրինակներ ունի, տարածվում է ողջ ՀԿ սեկտորի վրա առհասարակ: Այս առումով իրենց հանրային ընդունելության և սոցիալական ազդեցության մասին հոգացող ՄԻ ՀԿ-ները պետք է, թերևս, իրենց ինքնությունն ու գործելակերպերն ավելի հստակ ներկայացնեն: Պատվեր կատարողի իմիջը գերիշխում է մի շարք պատճառներով, որտեղ իր դերն ունի ինչպես ՄԻ ՀԿ-ների դեմ քարոզչությունը, այնպես էլ շատ ՀԿ-ների աշխատանքը: Առավել ընդհանուր և կարևոր գործոն է, սակայն, *գործունեության, այդ թվում՝ ֆինանսական աղբյուրների և ծախսերի թափանցիկությունը*, և սա վերաբերում է ոչ թե առանձին, այլ բոլոր ՀԿ-ներին: Դոնորն իր հաշվետվությունն է պահանջում, պետությունն՝ իրենը, և այդքանով հաշվետվողականությունն ավարտվում է՝ չունենալով հանրային բաղադրիչ: Հանրության առջև հաշվետվողական լինելու խնդիր հասարակական կազմակերպությունը չի դնում, հազվադեպ ՀԿ-ներ են իրենց կայքերում նմանատիպ տեղեկատվություն տրամադրում:

Տեղեկատվական-կոմունիկատիվ խնդիրներ. Այս խնդիրները մեծ կշիռ ունեն հանրային ընկալման և դրա բարելավման հարցում: Տարբեր հետազոտություններ վեր են հանում, որ ՀԿ հասկացությունը դաշտի սկզբնավորման փուլում գերազանցապես զուգորդվում էր բարեգործական կամ կրոնական կազմակերպության կամ իրենց

որոշակի հարցով օգնող գրասենյակի հետ, և այդ հանրային ընկալումը մինչ օրս մնում է գերիշխող: Մարդկանց ծանոթ են այն ՀԿ-ների (հատկապես միջազգային) անունները, հատկապես մարզերում, որոնք մշակութային կամ համայնքային ծրագրեր են իրականացրել համայնքում: Իսկ իրավապաշտպան ՀԿ-ների մասին գիտելիքն էլ ավելի սուղ է և աղոտ, հաճախ՝ աղճատված: Դրանց մասին տեղեկացված են նրանք, ովքեր ինչ-որ կերպ առնչվել են կամ այդ ոլորտում աշխատողների/շահառուների մտերմության առաջին օղակում են՝ հարազատներ, ընկերներ: Միևնույն ժամանակ, ՀԿ սեկտորում ձևավորված չէ սեփական իմիջի վրա աշխատելու պահանջմունքը, մեծ մասամբ տեղեկատվական ասպեկտն անտեսվում է: Չնայած հաճախակի շեշտադրումներին, որ հասարակությունը քաղաքացիապես գիտակից չէ, քիչ բան է արվում հասկանալի լինելու համար: Միայն սակավաթիվ ՀԿ-ներ, որոնք ներկայանալու և ընդունված լինելու առանձնահատուկ խնդիր ունեն (օրինակ՝ սեռական փոքրամասնությունների շահապաշտպանությամբ զբաղվող), աշխատում են այս ուղղությամբ: Հանրային կապերի և սոցիալական գովազդի (ինչպես առհասարակ իրավապաշտպանության և ՄԻ-ի, այնպես էլ սեփական գործունեության մասին) նկատելի բաց կա, արդի սոցիալական մեդիաները ևս արդյունավետ չեն օգտագործվում այդ նպատակով: Պատահական չէ, որ այդ բացը լրացվում է քարոզչության ավելի հստակ մոտիվացիա ունեցող տարբեր այլ ակտորների տեղեկատվական գործողություններով, որոնց արդյունքում գերիշխում են ՄԻ ՀԿ-ների մասին կլիշեացված կամ «լողզված» պատկերացումներ: *Տեղեկատվական քաղաքականության խնդրի* ևս մեկ կարևոր կողմ է մեդիաների հետ ՀԿ-ների թույլ կապը: ՀԿ-ները չեն փորձում օգտագործել մեդիաները որպես սեփական գործունեությունը լուսաբանող հարթակ: Խնդիրը բարդանում է նրանով, որ ինքը՝ ՀՀ մեդիադաշտը վստահելի ու ազատ չէ, ու ՀԿ-ները կարիք ունեն շատ ընտրողաբար աշխատել դրա միջավայրում: Կոմունիկատիվ խնդիրների ևս մեկ ասպեկտ է այն, որ հասարակական/քաղաքացիական

կառույցները հանրության հետ հաղորդակցվում են բարդ, հանրայնորեն չիմաստավորված կոնցեպտներով, և այս առումով կառավարական-պաշտոնական տեղեկատվական ազդեցությունն ավելի արդյունավետ կամ առնվազն ազդեցիկ է թվում: Այն ևս հարկ եղած դեպքում կիրառում է դեմոկրատիայի կոնցեպտները՝ միևնույն ժամանակ որպես լրացուցիչ խաղաքարտ ունենալով ազգայինի դիսկուրսը, որը հասու է ժողովրդական ընկալմանը:

Այսպիսով, խնդիրների այս բլոկում կարելի է պայմանականորեն տարանջատել *իրական իմիջի* և *կոմունիկացվող իմիջի խնդիրներ*:

Ներքին գանգի խնդիրներ. Իրավապաշտպան ՀԿ ներկայացուցիչներն արձանագրում են, որ այս սեկտորի ներսում փոխհարաբերությունների խնդիրներ կան: Տարբեր ՀԿ-ներ միմյանց հետ տարբեր չափով են համագործակցում, կան լարումներ, նաև ջրբաժաններ (ըստ այն բանի՝ պետական կառույցների հետ համագործակցում ես, թե ոչ, կամ տվյալ թեմայով հայտարարությանը միանում ես, թե ոչ և այլն): Սա լրացուցիչ գործոն է հասարակության կողմից ոլորտի հստակ ընկալելիության ճանապարհին:

Պոտենցիալներ իրավապաշտպան ՀԿ սեկտորում. Տարածաշրջանի, ինչպես նաև Ռուսաստանի համեմատ՝ մեզանում ՀԿ-ների մասին օրենքը, որպես այդպիսին, լուրջ խնդիրներ չունի և սահմանափակող չէ, չնայած ՀՀ հարկային օրենքի ու ՀԿ-ների մասին օրենքի որոշ հակասությունների: Մեկ այլ դրական ասպեկտ է այն, որ Հայաստանում քաղաքացիական հասարակությունը (նախածեռնություններ, ոչ ֆորմալ խմբեր) և ՀԿ-ները վերածածկվող են, այսինքն՝ հիմնականում ինստիտուցիոնալացված ՄԻ ՀԿ անդամները նաև ներգրավված են ակտիվիստական նախածեռնություններում, շարժումներում: Եվ վերջապես, նկատվում են որոշակի գաղափարական ինքնուրույնացում և դոմոր-կախյալության նվազում, այսինքն՝ որոշ ՀԿ-ներ իրենք են հանդես գալիս սեփական առաջնահերթություններով ու թեմաներ առաջադրելով, երբեմն մերժելով դոմորների: Իրավա-

պաշտպանները դարձել են ավելի փորձառու և ավելի *սուբյեկտային*։ Ընդ որում՝ չի բացառվում, որ այս միտումը շահեկան լինի նաև հենց դոնորներին՝ ավելի հասուն և ինքնաբավ կառույցների հետ համագործակցելու առումով։

Խնդիրներ դոնորների մոտեցումներում

Հարցված իրավապաշտպանները նշում են, որ ոլորտի որոշ խնդիրների վրա ազդում են հենց դոնոր կազմակերպությունների մոտեցումները։ Օրինակ, նշվում է, որ դոնորների վերահսկման մեխանիզմները կամ առնվազն վերահսկում իրականացնելու մոտիվացիան թույլ են, տեղ են գտնում անհետևողական մոտեցումներ ՀԿ-ների և նրանց ծրագրերի ֆինանսավորմանը (կարող են ձախողումից հետո նորից ֆինանսավորել, ֆինանսավորել նույնատիպ, արդեն հաջողությամբ իրականացվող(ված) ՀԿ ծրագիր (դուալիկացիա), կարող են նախընտրել տվյալ ՀԿ-ին, քանի որ այնտեղ լավ են պատրաստում հաշվետվություններ, կամ՝ պարզապես հաստատված երկարատև ինտեգրոն հարաբերությունների բերումով)։ Ավաճող տարբեր դոնորներին վերաբերում է, իհարկե, տարբեր չափով։ Ավելի արդյունավետ են այն միջազգային դոնորները, որոնք տեղում ունեն լոկալ գրասենյակներ և անմիջական ներգրավման ու վերահսկման հնարավորություն, հակառակ դեպքում ծրագրերի իրականացումը հանգեցվում է տարեկան մեկ-երկու հաշվետվության։ Դոնորները բավականաչափ արագ չեն արձագանքում ՔՀ ձևաչափի փոփոխությանը և չունեն մշակված մեխանիզմներ՝ ֆինանսապես աջակցելու և հետևելու այն խմբերին, թիմերին, որոնք որպես ՀԿ կամ այլ՝ ֆորմալ կերպով չգրանցված չեն, սակայն դրսևորել են իրապես գործելու և փոփոխությունների մասնակցելու իրենց պատրաստակամությունը։ Դոնորներից ծրագրային և ֆինանսական կախվածությունը մեղմելու ձևերի մշակման կարիք կա, որին պետք է մասնակցեն դոնորները ևս։

Խնդիրներ պետություն-ՀԿ-հասարակություն «եռանկյունում»

Ազգայնական դիսկուրս. Հասարակական գործընթացների վերաբերյալ պետական/կառավարական դիսկուրսը շարունակում է մնալ գերազանցապես ազգայնական՝ ոչ միայն չնպաստելով քաղաքացիական մտածելակերպին, այլև իր դոմինանտ մեդիա-ազդեցությամբ արտամղելով այն: Ընդ որում՝ այս կամ այն ինստրումենտալ նպատակով ազգայնական բառապաշարը հաճախ ուղղվում է ՀԿ-ների դեմ. «Կառավարությունը մեզ շարտում է ժողովրդի դեմ, կատաղեցնում է ու մեզ դեմ տալիս, այդ ընթացքում իր գործը տակից անում: Հենց գենդերի մասին օրենքի օրինակը, որ հենց պետությունն է ընդունել, հետո ժողովրդին լարել մեր դեմ» (ՀԿ ներկայացուցիչ):

Երբ պետությունը նույնացվում է կառավարության հետ, այն ընկալվում է որպես օտար, անգամ՝ հակառակորդ, սակայն երբ հաջողվում է ստեղծել ազգային համատեքստ, պետությունը նույնացվում է երկրի ու ազգային սահմանների հետ, և օտար են դառնում միազգային դոմորներից սնվող կազմակերպությունները: Հենց ազգայնականության դիսկուրսի միջոցով է հաջողվում կարգավորել այս ընկալումները՝ պետությունը բերելով Մենք-ի, իսկ ոչ կառավարական սեկտորը՝ Ոչ Մենք-ի դաշտ: Այսպիսի խաղարկման համար նպաստավոր հիմք է նաև այն, որ հայաստանյան հանրության մեջ անվտանգությունը բարձր արտահայտված արժեքներից մեկն է, որը թույլ է տալիս ակտիվացնել նաև ազգային անվտանգության թեման: Միևնույն է, սակայն, պետական քարոզչությունը հանրային կարծիքը ձևավորող միակ գործոնը չէ, ինչպես արդեն նշել ենք վերը:

Արձակատո՞ւմ, թե՞ համագործակցություն դիլեմա. Մեծ հաշվով, կառավարական և ոչ կառավարական սուբյեկտների փոխառնչությունը երկու այլընտրանք ունի, որոնք կարելի է անվանել նաև «փոխխանգարո՞ւմ, թե՞ փոխլրացում» կամ «գրո համագործակցութ՞յո՞ւմ, թե՞ համագործակցություն»: Հարցին տարբեր իրավապաշտպան

ՀԿ-ների տարբեր կերպ են պատասխանել, և դա կախված է նաև այն խնդիրների բնույթից, որոնցով զբաղվում են: Որոշ իրավապաշտպանների համար հարաբերությունների սխեման *փոխադարձ ճնշումների* վրա է հիմնված. պետությունը ճնշում է քաղաքացուն, վերջինս դիմում է ՀԿ-ին, որը փորձում է ճնշել պետությանը, և այստեղ համագործակցությունը տեղ չունի: Միևնույն ժամանակ, ՄԻ դաշտում սկստիվ գործող որոշ իրավապաշտպաններ ՀԿ-պետություն հարաբերությունը դիտում են որպես *ժանր, բայց անհրաժեշտ գործակցություն* և շարունակական բանակցում: Այս դեպքում ևս նշվում է, որ պետական կառույցների հետ առնչվելը գերակշռող դեպքերում հոգեբանորեն դժվար և տհաճ է, կան կոմունիկատիվ խնդիրներ (առնվազն տարբեր են քննարկվող խնդիրների ընկալման մակարդակները և բառապաշարը): Տարբեր պետական գերատեսչություններ ՄԻ կառույցների հետ շփվում են անկեղծության և ներգրավման տարբեր աստիճաններով: Իրավապաշտպաններից մեկի փոխանցմամբ, օրինակ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իսկապես ուզում էր առաջ տանել ընտանեկան բռնության օրենքի ընդունումը և դրսևորում էր անկեղծ շահագրգռվածություն, մինչդեռ արդարադատության նախարարությունը, արդեն մեկ այլ իրավապաշտպանի փոխանցմամբ, շատ ավելի փակ և ֆորմալ է հարաբերություններում: Պետկառույցների՝ ՀԿ-ների հետ հաշվի նստելու ձգտումն այս կամ այն չափով դրդված է միջազգային դոնորների հետ լավ հարաբերություններն ու վարկանիշը պահպանելու շարժառիթով և ոչ այնքան՝ գաղափարական ու նպատակային միասնության զգացումով:

Տարբեր տեսակետների ընդհանրությունն այն է, որ բոլոր իրավապաշտպաններն էլ ՀԿ-ների հիմնական դերն իդեալական պայմաններում համարում են պետությանը կոմպլեմենտար լինելը (լրացնել պետական գործառնության բացերը, վերհանել ու ցույց տալ, երբեմն օգնել շտկել): Իրավապաշտպանների մեծ մասը, սակայն,

Հայաստանը տարանջատում է այս սկզբունքից՝ գտնելով, որ մոդելը գործում է կայացած ժողովրդավարություններում և ոչ մեր իրականության մեջ, որտեղ համագործակցությունը սահուն վերածվում է կոոպտացիայի՝ «իրենցով անելու»: Այս համատեքստում որպես խնդիր մատնանշվում է *սահմանի* հարցը. «Ավելի հակված եմ նրան, որ համագործակցություն չի կարելի, որովհետև հենց ասում ես կարելի է, անմիջապես սկսում ես փնտրել սահմանը» (իրավապաշտպան ՀԿ ներկայացուցիչ): «Իրականում համագործակցությունը շատ բարակ սահմանի վրա է՝ չանցնել և նրա կամակատարն ու պասիվ դաշնակիցը չդառնալ» (իրավապաշտպան ՀԿ ներկայացուցիչ): Սահմանն անցնելու մտավախության օրինակ է նաև իրավապաշտպաններից մեկի այն պնդումը, որ պետության հետ համագործակցելով՝ լեգիտիմացնում են ներկայիս իշխանությունները և մասնակցում այն վտանգավոր պատրանքի ստեղծմանը, թե նրանք ժողովրդավարական են կամ կարող են դառնալ այդպիսին: Ոչ վերջին հերթին, սահմանների դրսևորումը ցույց է տալիս մենք-նրանք տիպի հարաբերություններ:

Այսպիսով, կառավարություն-ՄԻ ՀԿ-ներ հարաբերություններում գերիշխում է զրո համագործակցության մոտեցումը՝ առձակատման կամ խուսափման մոդելներով: Միևնույն ժամանակ, համագործակցելու աստիճանը կախված է ՀԿ գործունեության ոլորտից. ավելի սպեցիֆիկ խմբեր թիրախավորողների մոտ համագործակցելն ավելի ռացիոնալ անհրաժեշտություն է, որին նրանք երբեմն դիմում են, մինչդեռ ՄԻ ընդհանուր պաշտպանությամբ, ինչպես նաև բնապահպանության խնդիրներով զբաղվող թիմերն առավելապես կոնֆրոնտացիոն հարաբերություններ ունեն կառավարության հետ:

Զգայունություն ընդհանուր մշակութային համատեքստին.

Այսպիսի զգայունություն ունեն նաև պետական ծրագրերը: Ասվածը պարզաբանող լավ օրինակ է ՀԿ ներկայացուցիչներից մեկի գործակցության փորձը նախարարություններից մեկի հետ: Չնայած փոխ-

ընթացմանը և համատեղ ծրագրի զեկույցից նախարարության գոհունակությանը՝ ԶԼՄ-ում հայտնված պրովոկատիվ տեսակետի ճնշման տակ (ծրագիրը վերաբերում էր զգայուն թեմայի՝ ՄԻԱՎ-ՁԻԱՀ-ին) նախարարությունն ի վերջո խնդրել էր իր հետ համագործակցության մասին տեղեկատվությունը հեռացնել ՀԿ կայքից՝ այդպիսով իրեն տարանջատելով կլիշեացված բացասական ընկալումից: Այսինքն՝ տարբեր գործոններ կարող են կաշկանդել պետկառույցին և ապամոտիվացնել ՀԿ-ի հետ հետագա գործակցությունն անգամ նախնական պատրաստակամության պարագայում:

Ամփոփենք վերլուծության այս բաժինը մի շարք գործոններով, որոնք, այսպիսով, ազդում են ՄԻ ՀԿ-ների աղոտ կամ նեգատիվ հանրային ընկալման վրա.

- Տեղեկատվական քաղաքականության բացակայություն
- Ներքին համերաշխության և արդյունավետ գործակցության պակաս
 - Գաղափարների (այդ թվում՝ մարդու իրավունքների) և գործողության հակասություն հենց ՀԿ-ների պրակտիկաներում
 - Ծրագրային, գրանտային կողմնորոշում, մեծ կախվածություն դոնորներից
 - ՀԿ-ների վերաբերյալ պաշտոնական բացասական դիսկուրս
 - Քաղաքացիական մասնակցությունը սահմանափակող խորհրդային ժառանգության մնացուկային ազդեցություններ
 - Շահերի իրական կամ թվացյալ անհամապատասխանություն բոլոր երեք կողմերի միջև. ոչ քաղաքացին, ոչ ՀԿ սեկտորը, ոչ կառավարությունը հստակ չեն սահմանել, թե որն է իրենց ռազմավարական շահը, և որոնք են դրա ուղղությամբ արվելիք քայլերը:

2.2. ՀԿ-ների վերաբերյալ երիտասարդների պատկերացումները և գնահատականները. ֆոկուս խմբերի արդյունքների վերլուծություն

Մի ՀԿ-ների մասին երիտասարդների ընկալումները մատնանշում են խնդիրներ ինչպես *պատկերացումների* (տեղեկացվածություն, իմաստավորում), այնպես էլ *դիրքորոշումների* (մասնավորապես՝ *վստահության*) առումներով:

Մի ՀԿ-ների գործունեության մասին իրազեկվածությունը թույլ է կամ բացակայում է, պատկերացումները համեմատաբար հստակ են այն երիտասարդների շրջանում, որոնց ընկերները կամ անմիջական սոցիալական ցանցից այլք ներգրավված են կամ առնչվել են ՀԿ-ներին: Ավելի աղոտ, նոմինալ պատկերացումներ՝ թվարկման մակարդակում, առկա են ՁԼՄ-ում, հատկապես հեռուստատեսությամբ հնչեցվող ոլորտների վերաբերյալ: Այսպես, որպես իրենց ծանոթ ՀԿ ոլորտներ նշվում են բնապահպանական, հաշմանդամների կարիքների, բարեգործական, կանանց բռնության, զինվորների ծնողների և սպառողների ու վարորդների իրավունքների կազմակերպությունները, սակայն հիմնականում կարողանում են կոնկրետ անվանել միայն վերջին երկու ոլորտի ՀԿ-ներ: Ակտիվ գործող Մի ՀԿ-ների և իրավապաշտպանների անուններ գրեթե չեն հնչեցվել: Օրինակ՝ նշվում է բնապահպանական ոլորտը, սակայն նախաձեռնության կամ ակտիվիստների անուններ չեն նշվում: Պետք է ասել, որ այսպիսի անորոշ ընկալումը ոչ միայն հենց Մի ՀԿ-ների չիմացության, այլև առհասարակ մարդու իրավունքների և նրա պաշտպանության ինստիտուտներից հեռացվածության արդյունք է: Պատահական չէ, որ Մի-ին առնչվող ոչ մի հարցի դեպքում չի մտաբերվում օմբուդսմանի ինստիտուտը, շատերը չեն էլ կարողանում վերջինիս մասին հարցից հետո հստակ նկարագրել այդ ինստիտուտի դերը կամ վերաբերմունք

հայտնել, այն առավելապես ներկայացվում է որպես գոյություն չունեցող բան:

ՀԿ-ների մասին ընդհանուր աղոտ իրազեկվածության ֆոնին առկա են ինչպես *դրական*, այնպես էլ *բացասական* ընկալումներ:

Դրական ընկալումներ

ՄԻ/իրավապաշտպան ՀԿ-ները դիտվում են որպես տվյալ ոլորտում պետության թերացումները լրացնող օղակ: ՀԿ-ները դիտվում են նաև որպես հարթակ. կոչված են և կարող են բարձրացնել (բայց ոչ լուծել) նրանց հարցերը: ՀԿ-ների ընկալվող դրական ազդեցության սահմանը խորհրդատվություն, էական տեղեկատվություն տրամադրելն ու իրենց խնդիրը բարձրաձայնելն է: Ի հավելումն, որպես սեփական խնդիրները լսելի դարձնելու հարթակ դիտվում են նաև սոցցանցերը (դրանք անհատապես բարձրաձայնելը), և այս նախընտրությունը հաճախ հնչել է որպես պատասխան *«կրիմեթ պետկառույցի»*, թե՞ *իրավապաշտպան ՀԿ-ի»* երկընտրական հարցին: Սա կարելի է համարել քաղաքացիական հասարակության նոր՝ «2.0» ձևի դրսևորման միտում, երբ քաղաքացին փորձում է ուղիղ մասնակցություն ունենալ սեփական իրավունքների պաշտպանությանը՝ չդիտարկելով վերջինս միայն ինստիտուցիոնալացված կազմակերպությունների ձևով: Դրական մեկ այլ ընկալում է *ՀԿ-ները որպես նվիրյալների խումբ* դիտարկելը, սակայն այս կարծիքը կիսում է երիտասարդների միայն մի մասը:

Բացասական ընկալումներ

Բացասական դիրքորոշումները գերիշխում են, դրանք մի քանիսն են: Մեկը ՀԿ-ների ներկայացուցիչներին որպես *կեղծ նվիրյալներ* ընկալելն է, *կասկածը նրանց նպատակների անկեղծությանը*, ան-

շահախնդրությանը և հանրային օգուտին: Այս ամենի բերումով ՀԿ-ների գործունեությունը մեծ մասը գնահատում է *անարդյունավետ*, ուստի և *անհիմաստ*: ՀԿ-ների հանդեպ թերահավատ վերաբերմունքը շաղկապված է նաև միջազգայինների հանդեպ թերահավատության հետ՝ ոչ կարևոր, «մեզ հետ կապ չունեցող» ծրագրեր իրականացնելու համար: Մեծ հաշվով, սակայն, ՀԿ-ների բացասական գնահատումները կապվում են ոչ թե «դրսի պատվեր» կատարելու, այլ սեփական և խմբային նեղ շահերով տարվելու և գաղափարներին հավատարիմ չմնալու հետ: ՀԿ-ներն անարդյունավետ են գնահատում նաև այն երիտասարդները, ովքեր կասկածի չեն առնում նպատակների ազնվությունը, սակայն քննադատում են խոսքի դիմաց իրական գործ չանելու համար. «Պիտի չխոսեն, խոսում են, պիտի գործեն, չեն գործում» (Ֆոկլուս-խմբի մասնակից): Անարդյունավետ գնահատումը փոխկապված է նաև վստահության պակասի հետ, և, ելնելով վերը նշվածից, կարելի է առանձնացնել անվստահության երկու տիպ՝ *թերահավատություն նպատակներին և թերահավատություն արդյունքներին*: Գերիշխում է երկրորդ դիրքորոշումը (անկեղծ են անում, բայց օգուտ չի տալու), որը ևս լրիվ բավարար է ՀԿ-ներն իրենցից դիստանցված զգալու համար: Նաև նշված պատճառներով է, որ երիտասարդների մեծ մասը ՀԿ-ները չի ընկալում որպես աշխատանքային սեկտոր, չնայած այլ համատեքստում նշում է ՀԿ-ներում բարձր աշխատավարձի ու չժանրաբեռնված գրասենյակային աշխատանքի առավելությունները: Պետական կառույցներում աշխատելն ավելի հասկանալի է, ավելի շուտ պետկառույցի, քան ՀԿ-ի դիմելը՝ ևս:

Չնայած տրված և՛ դրական-խրախուսական, և՛ բացասական գնահատականներին՝ երիտասարդների շրջանում գերիշխող են մնում անհաղորդությունը, այդ ոլորտի հետ առնչություն չզգալը. ՀԿ-ներում մարդիկ են, որոնք ինչ-որ բաներ են ասում ու անում, որոնք իրենց ու իրենց խնդիրների հետ կապ չունեն: Կառավարական և ոչ կառավարական սեկտորներից յուրաքանչյուրին առնչվելու պատրաստակա-


մությունը հարաբերական և իրավիճակային է: Քաղաքացին ո՛չ պետությանն է վստահում, ո՛չ ՔՀ սեկտորին, ուստի իրադրությունից կախված է որոշում պետկառույցին, թե ՀԿ-ին առնչվելու համեմատական նախընտրությունը (որպես աշխատատեղ նախընտրում է պետականը, չլինելու դեպքում պատրաստ է աշխատել ՀԿ-ում, կամ՝ խրախուսում է ՀԿ-ների հակակոռուպցիոն ջանքերը, բայց կոնկրետ դեպքում պատրաստ է պետկառույցի հետ այդ ուղով հարց կարգավորել): Նկարագրված պատկերի բերումով թույլ է արտահայտված ՄԻ գործունեության մեջ կամ առհասարակ քաղաքացիական նախաձեռնություններում ներգրավվելու պատրաստակամությունը:

Գերիշխող տրամադրություններն ազդում են նույնիսկ խոցելի խմբերի վրա, որոնք ևս սեփական շահապաշտպանության մեջ ակտիվորեն չեն ներգրավվում՝ այդ ինտերոնությամբ ևս բացասաբար ազդելով ոլորտում գործող իրավապաշտպանական կառույցների վրա:

2.3. ՀԿ-ների ճանաչում, վստահություն և ներգրավման պատրաստակամություն երիտասարդների շրջանում. հարցաթերթային հարցման արդյունքներ

ՄԻ ՀԿ-ների նկատմամբ դիրքորոշումների դուրսբերման նպատակով արված հարցման ընտրանքը կազմել են 18-30 տարեկան 100 երևանաբնակ երիտասարդներ (միջին տարիքը՝ 24,5), մեծ մասամբ (86%) բարձրագույն կրթությամբ (ուսանողներ), 60%՝ իգական սեռի ներկայացուցիչներ: Բացակայող արժեքները (missing values) նշված չեն էական չլինելու պատճառով: Հիմնական նպատակն էր դուրս բերել ՀԿ-ների գործունեության ընկալման և վերաբերմունքի այն կողմերը, որոնք թույլ կտային հասկանալ ՀԿ-ների՝ որպես սոցիալական ինստիտուտի, տեղը երիտասարդների սոցիալ-հոգեբանական տարածքում, այսինքն՝ վերջիններիս իմաստային դաշ-

տում որպես յուրային կամ ոչ յուրային ընկալվելու տեսակետից: Ստորև մեկնաբանված են հարցաթերթի հարցերի մի մասի արդյունքները:




Պատկեր 2. Ո՞ր կառույցներն են առավել արդյունավետ երկրում առկա խնդիրները լուծելու գործում

Պատկեր 2-ում ներկայացված տվյալները թույլ են տալիս հասկանալ ՀԿ-ների հանդեպ վերաբերմունքն այլ ինստիտուտների հանդեպ վերաբերմունքների համեմատական պատկերում: Տեսնում ենք, որ երիտասարդները գերակայող հենակետ չունեն: ՀԿ սեկտորի արդյունավետության աստիճանը ևս շատ բարձր չի գնահատվում, սակայն ամենաանվստահելին էլ չէ: Այս հարցի շրջված տարբերակի դեպքում ևս (որո՞նք են երկրում ամենաանարդյունավետ կառույցները), ՀԿ-ների գնահատականը շատ ցածր չէր: Որպես առավել անարդյունավետ կառույց ՀԿ-ներն էր ընտրել հարցվածների $\approx 9\%$ ը, մինչդեռ կառավարությունն ու դատական համակարգն այդպես են գնահատում 23% և 19%-ը:

Հաջորդ պատկերը ներկայացնում է, թե հասարակական նշանակության խնդիր բարձրացնելու կարիքի դեպքում երիտասարդ-

ներն ում կղիմեին առաջին հերթին (տե՛ս Պատկեր 3): ՀԿ-ներին կղիմեր ամենափոքր մասը, իսկ պետկառույցին՝ ամենամեծ մասը, և սա՝ այն դեպքում, երբ կառավարության հանդեպ ցածր վստահությունը համատարած տրամադրություն է: Պատկերից նաև նկատելի է, որ ընդունված է դառնում լրատվամիջոցների, այդ թվում՝ սոցիալական մեդիայի միջոցով խնդիրների բարձրաձայնումը, որը վերջին տարիների փորձի ազդեցությունն է: Սա համահունչ է ֆոկլուս-խմբերի արդյունքին:



Պատկեր 3. Ո՞ր կառույցին կղիմեք առաջին հերթին՝ խնդիր բարձրաձայնելու ցանկության դեպքում

Հարցվածների 33%-ն է միայն գտնում, որ Հայաստանում ՀԿ-ները բարձրացնում են իրենց, իրենց ընտանիքի կամ շրջապատի մարդկանց շահերին ու խնդիրներին վերաբերող հարցերը: Էլ ավելի փոքր տոկոս (23,7%) է գտնում, որ ՀԿ-ները կարողանում են ազդեցություն ունենալ իրենց/ընտանիքի/շրջապատի մարդկանց խնդիրների լուծման գործում:

Խոստում է նաև կլիշեների ու հակապրոպագանդայի ազդեցությունը երիտասարդների բացասական ընկալումների վրա՝ հետևյալ երկու պնդումներից մեկին տրված նախապատվության մեջ:



Չնայած ՀԿ-ները միջոցներ են ստանում միջազգային կազմակերպություններից՝ նրանք ծառայում են մեր երկրի շահերին:	36.5%
ՀԿ-ները վճարվում են միջազգային կազմակերպությունների կողմից՝ վերջիններիս շահերը Հայաստանում առաջ տանելու համար:	63.5%

Աղյուսակ 1. ՀԿ-ների նպատակների ընկալում

Միևնույն ժամանակ, հաջորդ նմանատիպ հարցին պատասխանելիս ՀԿ-ների դերը դրական են գնահատել շատ ավելի մեծ թվով երիտասարդներ: Սա նշանակում է, որ վերաբերմունքներն ու պատկերացումները դեռևս հստակ ձևավորված և կայուն չեն՝ ենթակա տարամետ ազդեցությունների, և ՀԿ-ները սա կարող են հաշվի առնել և հոգուտ իրենց կիրառել տեղեկատվական միջոցառումներում համապատասխան շեշտադրումներով:

ՀԿ-ների գործունեությունը նպաստում է ՀՀ պետական ծրագրերի արդյունավետ իրականացմանը:	68%
ՀԿ-ների գործունեությունը խոչընդոտում է պետական ծրագրերի իրականացմանը:	32%

Աղյուսակ 2. Պետության գործերում ՀԿ-ների դերի ընկալումը

Հաջորդ աղյուսակում արտացոլված են այն հարցի պատասխանները, թե ավելի շուտ օգտակար, թե վնասակար են համարում ՀԿ-ների գործունեությունը նշված ոլորտներից յուրաքանչյուրում: Տվյալներից երևում է, որ ՀԿ-ների դրական դերը հատկապես կարևորվում է իրավապաշտպանության (մարդու իրավունքներ,

էկոլոգիական իրավունքներ, կանանց և երեխաների իրավունքներ...) և ժողովրդավարական զարգացման գործում:

	ՀԿ-ների գործունեությունը	օգտակար	վնասակար
1.	Խնդիրների լուծում Ձեր տեղական համայնքում	53.3%	46.7%
2.	Ժողովրդավարության զարգացում	60.8%	39.2%
3.	Կոռուպցիայի դեմ պայքար	51.6%	48.4%
4.	Աղքատության նվազեցում	47.8%	52.2%
5.	Աշխատողների իրավունքներ	62.4%	37.6%
6.	Կրթության բարելավում	51.6%	48.4%
7.	Կանանց և տղամարդկանց հավասարություն	55.3%	44.7%
8.	Երիտասարդների համար հեռանկարների ապահովում	48.9%	51.1%
9.	Մշակույթ և արվեստ	60.6%	39.4%
10.	Մարդու իրավունքների պաշտպանություն	60.0%	40.0%
11.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	74.7%	25.3%
12.	Հատուկ կարիքներով (հաշմանդամ) մարդկանց կյանքի պայմանների բարելավում	70.5%	29.5%
13.	Ընտանեկան բռնության դեմ պայքար	66.0%	34.0%
14.	Երեխաների իրավունքների պաշտպանություն	61.5%	38.5%

Աղյուսակ 3. Տարբեր ոլորտներում գործող ՀԿ-ների դերի գնահատում

Ի լրումն՝ երկրում առկա խնդիրների շարքում երիտասարդները նշում են իրավունքների խնդիրներ, սակայն անմիջապես իրենց հուզող խնդիրների շարքում ավելի արտահայտվում են ֆինանսատնտեսական բնույթի խնդիրները: Այսինքն՝ ՄԻ ՀԿ-ների հասցեագրած խնդիրները համարվում են ընդհանուր առմամբ կարևոր, բայց դեռ ոչ անմիջապես իրենցը:

Տեղեկատվության աղբյուրների վերաբերյալ հաջորդ երկու հարցերի համատեղ դիտարկումը (տե՛ս Աղյուսակներ 4 և 5) մտածելու առիթ է տալիս. մի կողմից՝ երիտասարդները գտնում են, որ իրենց կարծիքի հիմքը հենց ՀԿ-ների գործունեությունն է, մյուս կողմից՝ փաստորեն, այդ գործունեության մասին կարծիքի ձևավորման հիմնական աղբյուրը հեռուստացույցն է: Այսպիսով, ՀԿ-ներն իրենց գործունեության մասին տեղեկացնելու մեծ բաց ունեն ինչպես հեռուստատեսությամբ, այնպես էլ այլ, ավելի հասանելի ՁԼՄ-ով ու տեղեկացման հատուկ, թիրախավորված միջոցներով:

<i>Նշվածներից ո՞րն է ավելի մեծ ազդեցություն ունեցել ՀԿ-ների մասին Ձեր կարծիքի ձևավորման վրա</i>	
Նրանց իսկ գործունեությունը	35.8%
Նրանց դեկավարների վարքագիծը	10.0%
Ես ՀԿ-ների մասին կարծիք չունեմ	12.5%
ՀԿ-ների ծրագրերը (այն գաղափարները, որոնք նրանք առաջ են տանում)	14.2%
Նրանց ֆինանսավորման աղբյուրները	10.9%
ՀԿ-ներում աշխատող մարդիկ	13.3%
Այլ	3.3%

Աղյուսակ 4 . ՀԿ-ների վերաբերյալ կարծիքի աղբյուրը

Ինչպե՞ս եք հիմնականում տեղեկանում ՀԿ-ների գործունեության մասին:	
Հեռուստատեսությամբ	32.5%
Օրաթերթերով	2.4%
Չեմ տեղեկանում, ՀԿ-ներով հետաքրքրված չեմ	14.3%
Հարազատների/ընկերների/ծանոթների հետ զրույցներից	10.3%
Ինտերնետով	25.4%
Անմիջականորեն ՀԿ-ում աշխատող մարդկանցից	10.3%
Բրոշյուրներից	1.6%
Տեղեկատվական թերթիկներից	0.8%
Ցուցանակներից	1.6%
Այլ կերպ	0.8%

Աղյուսակ 5. ՀԿ-ների վերաբերյալ տեղեկատվական հիմնական աղբյուրը

Որևէ ՀԿ-ում ներգրավված է կամ անդամակցելու պատրաստակամ է հարցվածների միայն 24%-ը: Սա ևս հիմնավորում է, որ անգամ որոշ հիմնարար ոլորտներում (մարդու իրավունքներ) ՀԿ-ների գործունեությունը կարևորելով՝ անհատը դեռևս դա չի կապում սեփական կյանքի և գործունեության հետ:

Ներգրավվելու պատրաստակամություն հայտնողների կողմից նշվել է հետևյալ ոլորտի ՀԿ-ներին հավանական մասնակցությունը. աշխատանքային իրավունքներ, ՄԻ պաշտպանություն, կրթության բարելավում, երիտասարդների համար հեռանկարների ապահովում, աղքատության նվազեցում:

Հարցաթերթային հարցման քննարկված արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ կետերի շուրջ.

Արդյունավետության ընկալում. ՀԿ-ների գործունեությունն ընկալվում է մոտավորապես նույնքան արդյունավետ, որքան կառավարութ-

յունը և լրատվամիջոցները (հարցվողների համապատասխանաբար 16%, ≈19% և ≈18%): Միևնույն ժամանակ, այլ սոցիալական կառույցների համեմատ, այն ավելի քիչ է հիշատակվել որպես անարդյունավետ՝ երկրում առկա խնդիրների լուծման համար: ՀԿ-ների ընկալվող արդյունավետության համեստ ցուցանիշները համընդհանուր սոցիալական անվստահության, թերևս նաև նրանցից ցածր ակնկալիքների դրսևորում են:

ՀԿ-ների գործունեությունը համեմատաբար *արդյունավետ և հանրագուտ* է գնահատվում *բնապահպանություն, հատուկ կարիքներով մարդկանց* պայմանների բարելավում, *ընտանեկան բռնության դեմ պայքար, մշակույթ և արվեստ*, ինչպես նաև *ժողովրդավարության զարգացում և իրավունքներ* ոլորտներում: Միևնույն ժամանակ, հատկապես երիտասարդների սպեցիֆիկ առաջնահերթությունների ոլորտներում (*կրթություն, հեռանկարներ երիտասարդների համար...*) ցուցանիշներն ավելի ցածր են:

Ներգրավելու պատրաստակամություն. Մեծամասնությունը չի պատկերացնում իրեն ՀԿ-ներին անդամակցելիս կամ դրանցում գործունեություն ծավալելիս: ՀԿ գործունեության դրական գնահատումն ավելի հաճախակի է, քան անձամբ մասնակցելու պատրաստակամությունը: Այսպիսով, ՀԿ-ները մեծ մասի համար մնում են *վերացական բան՝ վերացականորեն լավ կամ վատ:*

ՀԿ-ների գործունեության ընդունման, այսինքն՝ հնարավոր ներգրավման ՀԿ ոլորտներն են այնպիսիք, որոնք հասցեագրում են երիտասարդների համար այժմեական խնդիրներ. հեռանկարների ապահովում, կրթության բարելավում, իրավունքների պաշտպանություն, աղքատության նվազում:

Սեփական խնդիրների առնչությունը ՀԿ-ների գործունեությանը. Մեծ մասի համար ՀԿ-ների գործունեությունը չի նպաստում սեփական

և մտերիմների խնդիրների բարձրացմանը, առավել ևս ազդեցություն չունի դրանց լուծման վրա:

Մոտեցում-հեռացում դիրքորոշումներ ՀԿ-ների գործունեության վերաբերյալ. Հարցման տարբեր տվյալներից երևում է, որ երիտասարդներն ունեն երկակի և անկայուն դիրքորոշումներ ՀԿ-ների գործունեության վերաբերյալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջնային և երկրորդային մի շարք տվյալների համակցված վերլուծությամբ վեր են հանվում հետևյալ հիմնական խնդիրները հանրություն-հասարակական կազմակերպություններ փոխառնչությունների ոլորտում.

- ***Ճանաչում և առնչություն***

Իրավապաշտպան կառույցների և գործիչների ճանաչելիությունը ցածր է, աղոտ է ընկալվում և հարցվածների մի մասին ծանոթ չէ ՀԿ հասկացությունը: Դոմինանտ ընկալումն այն է, որ «դրանք ինչ-որ մարդիկ են, որ ինչ-որ բաներ են անում», ինչն իրենց հետ կապ չունի, իրենց խնդիրներին չի առնչվում: Ի լրումն՝ գերիշխում է ՀԿ-ների «գրասենյակային» կերպարը, փոխարենը ընկալումներում արտահայտված չէ դրանց գործառնության հիմքում ընկած կամավորության և ակտիվ մասնակցության սկզբունքները: Իրազեկվածությունն անբավարար է երկրի սոցիալ-քաղաքական խնդիրներում ընդհանուր առմամբ հետաքրքրված երիտասարդների շրջանում ևս: Բավարար չի թվում նաև ՀԿ ներկայացուցիչների կողմից հանրության ճանաչումը՝ իր բազմաշերտությամբ ու խնդիրների բազմազանությամբ: Միտում կա հասարակության մասին խոսել ընդհանրացված բնորոշումներով: ՀԿ-ները և հանրությունը թվում են իրապես միմյանցից դիստանցված:

- ***Վերաբերմունք և դիրքորոշումներ***

Առկա են ինչպես դրական, այնպես էլ բացասական գնահատումներ, որոնք, ընդ որում, հաճախ նույն հարթությունում են: Այսպես, ՀԿ-ները երիտասարդները դրական են գնահատում որպես դեմոկրա-

տիայի ֆոնը պահող անհրաժեշտ ինստիտուտներ, որպես ջանքեր գործադրող թիմեր, որպես գաղափարական ու նվիրյալ մարդկանց խումբ: Բացասական են գնահատվում որպես ոչ անհրաժեշտ, անհասկանալի կառույցներ, որպես իրական գործ չանողներ, որպես սեփական նեղ շահեր հետապնդող մարդիկ: Բացասական գնահատումներում շատերը վերարտադրում են «գրանտակերության» կլիշեն անքննադատորեն և առանց սեփական փորձի: Ե՛վ դրական, և՛ բացասական դիրքորոշումներն անկայուն ու երկակի են: ՀԿ-ների մասին հարցվողները հակված են անել միաժամանակ հակադիր պնդումներ: Պատկերացումների չձևավորված լինելը ՀԿ-ները կարող են դիտարկել որպես նպաստավոր հող՝ դրական կարծիք ձևավորելու ուղղությամբ իրազեկման աշխատանքների համար:

- ***Վստահության հարցեր***

Ճանաչելիության և սոցիալական դիստանցիայի խնդիրներից բխում է նաև վստահության ցածր աստիճանն իրավապաշտպան կառույցների նկատմամբ: Վերլուծությունը վեր է հանում, որ ՔՀ սեկտորը կարիք ունի ավելի մեծ հանրային վստահության, սակայն ոչ բոլոր կառույցներն են դա ճանաչում որպես սեփական խնդիր: Երիտասարդների շրջանում գերիշխում է ՀԿ-ների հանդեպ անվստահությունը կամ «պասիվ» վստահությունը, որի դեպքում ընդունվում են ՀԿ-ների նպատակների կարևորությունը և անշահախնդրությունը, բայց ոչ՝ ազդելու կարողությունը: ՀԿ-ների գործունեության դրական արդյունքներին հավատում են միայն նրանց հետ անձնական դրական փորձ ունեցած, ՀԿ-ներում ներգրավված կամ այդպիսի մտերիմ ունեցող երիտասարդներ:

Քաղաքացի-ՀԿ սեկտոր դիստանցիայի խնդիրը փոխկապված է քաղաքացի-պետություն և ՀԿ սեկտոր-պետություն հարաբերությունների բնույթի հետ: Կառավարական և ոչ կառավարական սեկտորնե-

րից յուրաքանչյուրին *առնչվելու պատրաստակամությունը հարաբերական և իրավիճակային է*, ենթադրում է համեմատություն մյուս ակտորի հետ: Քանի որ քաղաքացին ո՛չ պետությանն է վստահում, ո՛չ ՔՀ սեկտորին, ապա իրադրությունից կախված է որոշում պետության, թե ՀԿ-ի հետ առնչվելու հարաբերական նախընտրությունը:

Կառավարություն-ՄԻ ՀԿ-ներ հարաբերություններում գերիշխում է զրո համագործակցության մոտեցումը՝ առձակատման կամ խուսափման մոդելներով: Պետական օղակների հետ չհամագործակցելու նախընտրությունն ամրապնդված է բացասական փորձով և առնչությունների կոմունիկատիվ, հոգեբանական դժվարություններով: Չհամագործակցելու դիրքորոշումը դրդված է նաև կառավարության կոռուպցիոն պրակտիկաներից պաշտպանվելու ձգտումով, այս առումով պետության հետ ակտիվ համագործակցությունը «ոչ իսկական», «ոչ մենք» լինելու բաժանարար չափանիշ է իրավապաշտպան ՀԿ-ների ներքին ցանցում:

• Մարդու իրավունքների ընկալում

Մարդու իրավունքների գաղափարի և գիտելիքի «վերագործարկման» լուրջ կարիք կա: Վերլուծությունը վեր է հանում, որ ՄԻ կառույցների հանդեպ ունեցած թերահավատությունն ածանցյալ է մարդու իրավունքների գաղափարի հանդեպ թերահավատությունից: Երիտասարդները կուզենային, որ դրանք լինեին գործուն և պաշտպանված, սակայն ծայրահեղ սկեպսիսով են մոտենում այդպիսի հնարավորությանը: Նկատելի է նման արժեզրկման վրա մարտիմեկյան դեպքերի ազդեցությունը, որոնց հետևանքները հանրության ընկալումների վրա մեծ հաշվով մնացել են չուսումնասիրված և ՔՀ սեկտորի կողմից չհասցեագրված:

Այսպիսով, առնչությունները ՄԻ կառույցների և քաղաքացիների միջև խնդրային են, ՀԿ-ների արդյունավետ գործունեությանը չնպաս-

տող: Նկարագրված խնդիրների համար առանձնացրել ենք *ընդհանուր-հանրային և կոնկրետ (ոլորտային) գործոններ*:

• ***Ընդհանուր-հանրային գործոններ***

Առաջին խումբ գործոնները կապված են երկրում գերիշխող գաղափարների, տրամադրությունների և հարաբերությունների հետ՝ կազմելով այն ընդհանուր համատեքստը, որի ներքո գործում են հասարակական կառույցները: Այդ շարքում են սոցիալական համերաշխության և վստահության դեֆիցիտը, անվտանգության մտահոգությունները, քաղաքացիական սեկտորի վերաբերյալ աննպաստ պաշտոնական դիսկուրսը և ոչ վերջին հերթին՝ դիֆուսիվ ընկալումները և խմբային բաժանարարները (մենք-նրանք) տարբեր սոցիալական հարաբերություններում, որոնք իրենց մասնավոր դրսևորումն են ստանում ՀԿ-ներ-հանրություն փոխընկալումներում: Որպես առանձին գործոն, ինչպես նաև այլ գործոններին համակցված հանրային ընկալումների վրա ազդում է նաև խորհրդային ժառանգությունը: Ազդելով երիտասարդների վերաբերմունքների վրա՝ ընդհանուր գործոններն, այնուհանդերձ, չեն պայմանավորում ՀԿ-հասարակություն և ՀԿ արդյունավետության խնդիրների ողջ սպեկտրը:

• ***Մասնավոր՝ ոլորտային գործոններ***

Տեղեկատվական քաղաքականության բացակայություն. ՀԿ-ներն ունեն և՛ իրական, և՛ կոմունիկացիոն իմիջի խնդիրներ: Կա սեփական գործունեության և առհասարակ (ՄԻ) ՀԿ ոլորտի վերաբերյալ իրազեկման և տեսանելիության ձևավորման ուղղությամբ միջոցառումների դեֆիցիտ: Մինևույն ժամանակ, ՀԿ-ների կողմից հանրության հետ շփումների ինտենսիվացման, հաշվետվողականության մեծացման մոտիվ և դրանից բխող քայլերի կարիք ձևակերպված չեն: Իրազեկման, հանրային կապերի և տեսանելիության հարցերը ցածր

հանրային վստահության հիմնական գործոն են: Ընդ որում՝ արդյունավետ չեն օգտագործվում նոր ցանցային մեդիա-հարթակները. ծառայելով ներքին ցանցի կազմակերպման և տեղեկատվության փոխանակման գործերին՝ դրանք, այդուհանդերձ, չեն կիրառվում հանրային իրազեկման համար:

Դիսկուրսիվ հեռավորություն. Հաղորդակցության խնդրի մի կողմ է այն, որ իրավապաշտպան խմբերը դեռևս խոսում են հանրության համար «չպոպուլյարիզացված» դիսկուրսով և հասկացություններով, և բավարար աշխատանքներ չեն տանում հանրությանը դրանց մոտեցնելու ուղղությամբ: Դիսկուրսիվ հեռավորության ասպեկտ է նաև այն, որ հանրության լայն շերտերը հասարակայնորեն կարևոր թեմաների մասին դեռևս խոսում են ազգայնական եզրերով և չեն յուրացրել քաղաքացիական սեկտորին ավելի բնորոշ՝ ունիվերսալիստական և մարդու իրավունքների կոնցեպտները:

ՀԿ-ների գործելակերպից բխող կոնկրետ գործոնների շարքում է նաև գործունեության *ֆինանսական թափանցիկության պակասը*. ՀԿ-ները, կարծես թե, դժկամությամբ են անցնելու ֆինանսավորման աղբյուրների և ծախսերի տեղեկատվություն տրամադրելուն, քանի որ թափանցիկության խնդիրը վեր է հանվում այլ հետազոտություններում ևս, բայց համարժեք արծագանք չի ստանում:

Ընկալման վրա ազդող սպեցիֆիկ գործոն է *ՀԿ-ների անհամաչափ գենդերային կազմը*, «գերբնակեցվածությունը» կանանցով, ինչը երիտասարդ տղամարդկանց որոշակիորեն հետ է պահում պոտենցիալ ներգրավումից՝ արդյունքում ամրապնդելով անհավասար գենդերային ներկայացվածությունը: Վերջինիս նպաստող երկու հավանական գործոններն են՝ ա). տղամարդկանց համար «կանացի» միջավայրի խորթ լինելը և բ). ստերեոտիպային մտածողությունը, որի բերումով ՀԿ-ներում աշխատելն ընկալվում է որպես ոչ հիմնական գործունեություն, լուրջ արդյունք չբերող զբաղմունք:

Ինչպես առհասարակ ՀԿ սեկտորում, այնպես էլ իրավապաշտպան ՀԿ-ների դաշտում առկա են *խնդիրներ ներքին*

ինտերակցիաներում: Կան ընդհանուր ցանցերում ներգրավվածություն, հասցեագրվող խնդիրների ընդհանրությունից բխող համատեղ գործողություններ, սակայն մեծ հաշվով գործակցության և փոխադարձ ընդունման աստիճանը բավարար չէ: Առկա են ներքին լարումներ, խմբավորումներ:

Ընդհանուր-վերիրադրական և կոնկրետ գործոնների միջև միջանկյալ դիրքում են *ֆինանսական կախվածությունը և անկայունությունը*: ՀԿ սեկտորի գործառնության կախվածությունը դոնորներից ենթադրում է ծրագրային ուղղվածության փոփոխականություն և ոչ հետևողականություն, ինչը նորույթ չէ: Սա անդրադառնում է նաև հանրային ընկալումների վրա՝ նպաստելով ՀԿ գործունեությունը որպես արտաքին թելադրանք կամ առնվազն՝ իրական խնդիրներով չզբաղվող, մասնավոր գրասենյակ ընկալելուն: ՀԿ-ները բավարար ջանք չեն գործադրում այդ կախվածության նվազեցման և ֆինանսական ինքնուրույնության ուղղությամբ, չեն փորձարկում նման հնարավորություններ: Փոքրաթիվ օրինակներ, այդուհանդերձ, արդեն կան:

Ամփոփելով կարելի է ասել, որ չնայած առանձին ծրագրերի և ՀԿ-ների հաջողությանը՝ ներկայումս իրավապաշտպան ՀԿ սեկտորին չի հաջողվում կարգավորող օղակի դեր իրականացնել պետության և քաղաքացու միջև: Հաշվի առնելով տարբեր սուբյեկտների միջև լարումներն ու սահմանափակումները՝ այդուհանդերձ, կարելի է ակնկալել ՀԿ-ների ավելի մեծ արդյունավետություն:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- Իրավապաշտպան ՀԿ-ների ներկայացուցիչները կարող են *ավելի ռեֆլեքսիվ* լինել հանրային ընկալումների և վերաբերմունքների հարցում, այն է՝ ավելի պատասխանատու վերլուծական դիրքերից դիտարկեն դրանք ձևավորելու մեջ սեփական թերացումների դերը:

- Առանցքային նշանակություն ունի ՀԿ-ների կողմից *տեղեկատվական քաղաքականություն մշակումը*՝ տեսանելիության բարձրացման, իրազեկման ուղղությամբ, այդ թվում՝ սոցիալական գովազդների պատրաստման և տարածման միջոցով, ընդ որում.

- Իրազեկումն արդյունավետ կլինի, եթե ներառի ինչպես մարդու իրավունքների և իրավապաշտպան ՀԿ-ների մասին *ընդհանուր գիտելիքի ձևավորում* (ի՞նչ են ՄԻ, ի՞նչ է հասարակական կազմակերպությունը, ի՞նչ են անում իրավապաշտպան ՀԿ-ները, ինչպիսի՞ն է միջազգային փորձը), այնպես էլ *սեփական ծրագրերի ընթացքի ու արդյունքների լուսաբանում* (հաջողությունների, համագործակցությունների, մասնակիցների մասին): Դոնորների կողմից այս ասպեկտի կարևորումը հատուկ նշանակություն ունի բաղադրիչի իրականացումը հնարավոր դարձնելու համար:

- Երիտասարդների իրազեկման միջոցառումներում կարևոր է մարդու իրավունքները և դրանց պաշտպանության մեխանիզմները կապել նրանց անմիջականորեն հուզող հարցերի հետ՝ կրթության բարելավում, բարեկեցիկ կյանք, արժանապատիվ կյանք, աշխատանքի տեղավորում, ցույց տալ, թե ինչ կարող են «դրանք տալ» իրենց: Մոտեցնելով ՄԻ պաշտպանության հարցերը երիտասարդների մոտիվների և պահանջմունքների դաշտին՝ հատկապես էական է մատուցել դրանք սեփական և հարազատների անվտանգության երաշխիք լինելու տեսանկյունից:

- Սեփական գործունեության իրազեկման միջոցառումներում հարկ է ներառել և՛ կին, և՛ տղամարդ անդամների մասին

տեղեկատվություն (հաջողված օրինակներ, գործունեության ուղի, դերը ՀԿ-ում) և մշակել տղամարդկանց համար ավելի գրավիչ սեկտոր դարձնելու ձևեր, որոնց արդյունքում սեկտորը հանրայնորեն կներկայանա սեռային կազմով ավելի հավասարակշռված:

- ՀԿ-ները պետք է ապահովեն գործունեության (այդ թվում ֆինանսական) *թափանցիկության մեծացում*՝ ֆինանսական աղբյուրների և ծախսերի մասին հիմնական տեղեկատվությունը հասանելի դարձնելով իրենց կայքերում կամ փաստաթղթերում: Դոնորները ևս կարող են նպաստել դրան՝ չսահմանափակվելով միայն ներքին հաշվետվություններով: Այսպես, հանրային հաշվետվողականությունը կարող է պահանջվել որպես դրամաշնորհային ծրագրերի իրականացման բաղադրիչ:

- Անհրաժեշտ են *ֆինանսական ինքնուրույնացման*, այլընտրանքային նյութական միջոցների ստեղծմանն ուղղված քայլեր: Ֆինանսական ինքնուրույնացումը՝ որպես դոնորների օրակարգերից անմիջական կախվածության նվազում, բովանդակային լուրջ ազդեցություն կունենա ծրագրային ինքնուրույնացման վրա՝ մեծացնելով պրոակտիվ և հանրային առաջնահերթություններից բխող նախագծերի իրականացման հնարավորությունը: Սա, միևնույն ժամանակ, հետադարձ կերպով կարող է աջակցել դոնոր կառույցներին՝ մեծացնելու համաձայնեցվածությունը սեփական օրակարգերի և տեղային կարիքների միջև:

- Դոնորների կողմից նախընտրելի է ավելի ընտրողական և *ոչ ինտերցիոն մոտեցում*՝ ՀԿ-ների *ֆինանսավորմանը*: Ցանկալի է ավելացված ուշադրություն փոքր, զարգացող ՀԿ-ներին և իրենց «դաշտային» հասարակական ակտիվությունը դրսևորած, դեռևս ֆորմալ չգրանցված թիմերին: Աջակցելով վերջիններիս փոքրաթյուջե ձևաչափերով (որոնց դեպքում շեշտը լինի բովանդակային-արդյունաբար հաշվետվության վրա)՝ հնարավոր է գործարկել մեկնարկային փոքր կադրային ռեսուրս ունեցող թիմերի զորեղացումը, կանխել ՀԿ-դաշտի լճացումը, ինչպես նաև նպաստել քաղաքացիների շրջանում

հասարակական միավորումներին և դրանցում ներգրավվելով՝ համատեղ խնդիրներ լուծելու հանդեպ ավելի դրական դիրքորոշումներին:

- Համատեղ ծրագրերի տարբեր ձևաչափերով նպաստել հատկապես իրավապաշտպան կազմակերպությունների և *Նախաձեռնությունների միջև կապերի, սիներգիայի մեծացմանը*, օրինակ՝ մարզերում և Երևանում գործող երիտասարդական թիմերը մեկ «հովանոցի» ներքո բերող միջոցառումներ իրականացնել: Վերջիններս կարող են լինել բանավեճեր, համատեղ փոքրաբյուջե ծրագրեր կամ ներկայացվող ծրագրերում համատեղ գործողությունների բաղադրիչ:

- *Երիտասարդների հետ աշխատանքի ինտենսիվացումը* կարևոր է հատկապես այն առումով, որ նրանք կարող են իրենց ակտիվ սոցիալական շփման, մոբիլության, տարիքային խանդավառության շնորհիվ գործողություններն ու գաղափարները տարածել ՀԿ դաշտից դուրս՝ չներգրավված մտերիմների և ծանոթների օղակներում: Այս առումով հատուկ նշանակություն ենք տալիս բուհերի հետ գործակցությանը: Ընդունելով բուհերի մեծ մասի խիստ սահմանափակ անկախությունը՝ այդուհանդերձ, բուհերի ոչ ֆորմալ հարթակները հարկ է դիտարկել որպես իրազեկման հիմնական ռեսուրսներից մեկը: Ինչպես դոնոր կազմակերպությունները, այնպես էլ ՀԿ-ներն իրենց գործողությունները մշակելիս և գաղափարներ քաղելիս կարող են հանդիպումներ և հարցումներ իրականացնել ուսանողների հետ՝ ա). նրանց խնդիրները և ընկալումները հավաքագրելու, բ). դրանց լուծման մեջ ուղիղ մասնակցության ձևեր մոտիվացնելու նպատակով:

- Իրավապաշտպան ՀԿ-ներ-կառավարություն հարաբերությունների վերաբերյալ առաջարկներ անելու բավարար հիմքեր չենք տեսել: Միանշանակ չէ, որ համագործակցային հարաբերությունները ՀԿ-ներին պետական քաղաքականությունների վրա ազդելու ավելի մեծ հնարավորություն են տալիս: Համագործակցությունը մնում է տեսականորեն ավելի լավ, իսկ չհամագործակցելը՝ լոկալ իրականությամբ ավելի արդարացված մոդել: Ընդհանուր առմամբ, դաշտում

երկու մոտեցմամբ աշխատող ՄԻ ՀԿ-ների առկայությունը հարաբերականորեն հավասարակշռված է պահում դաշտը:

Վերջին առաջարկը, որով միաժամանակ կամփոփենք վերլուծությունը, դուրս է հետազոտության շրջանակներից և հիմնվում է հատկապես վերջին երկու տարիներին երկրում ծավալված քաղաքացիական գործընթացների ինտենսիվ դիտարկման վրա: Վերջինս ցույց է տալիս, այլ բաներին զուգահեռ, որ մարդիկ Հայաստանում նախընտրում և փորձում են իրենց քաղաքացիական ակտիվությունն ու պահանջներն իրականացնել ուղիղ ներգրավմամբ՝ ոչ ֆորմալ խմբերին և գործողություններին միանալով: Միևնույն ժամանակ, ինչ-որ պահից սկսած այդ ներգրավումն ընդհատվում է և չի ամրապնդվում որևէ խմբի, կազմակերպության կամ համայնքի պատկանելությամբ և համապատասխան ինքնությամբ: Տեղին ու ժամանակին է թվում, հետևաբար, հանրության լայն շրջանում ձևավորել հասարակական կազմակերպությունների՝ որպես մասնակցության, կամավորության և ազդելու հնարավորության վրա հիմնված միությունների (ոչ թե զուտ գրասենյակների) վերաբերյալ ավելի լայն և հիմնավոր պատկերացումներ, որոնք կխրախուսեն մարդկանց ներգրավվել դրանցում: Այս առումով հատուկ դեր ունի գործող իրավապաշտպան ՀԿ-ների ավելի ներառական և թափանցիկ՝ նոր անդամակցություն ողջունող ինքնաներկայացումը: ՀԿ հասկացությունը նոր զարգացումների համատեքստում «վերագործարկման», ժողովրդականացման կարիք և պոտենցիալ ունի:

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Aksartova, S. (2006). Why NGOs? How American donors embraced civil society after the Cold War. *International Journal of Not-for-Profit Law*, 8(3), 16-21. Available online at

http://www.icnl.org/research/journal/vol8iss3/special_4.htm

Alapuro, R. (2005). Russian and Estonian civil society discourses compared. Paper prepared for the *VII World Congress of ICCEES*, Berlin.

Anjum, T. (2010). From Confrontation to Collaboration: Contemporary Discourse on the State-Civil Society Relational Models1. *Journal of Political Studies*, 17, 93-102. Available online at

<http://pu.edu.pk/images/journal/pols/Currentissue-pdf/State%20Relational%20Models.pdf>.

Benequista, N., Gaventa, J., & Barrett, G. (2010). *Putting Citizens at the Centre: Linking States and Societies for Responsive Governance: a Policy-maker's Guide to the Research of the Development Research Centre on Citizenship, Participation and Accountability*. University of Sussex. Institute of development studies (IDS).

Coston, J. M. (1998). A model and typology of government-NGO relationships. *Nonprofit and Voluntary Sector Quarterly*, 27(3), 358-382.

Dutta-Bergman, M. J. (2005). Civil society and public relations: Not so civil after all. *Journal of public relations research*, 17(3), 267-289.

Howard, M. M. (2003). *The weakness of civil society in post-communist Europe*. Cambridge University Press.

Ishkanian, A. (2006). From inclusion to exclusion: Armenian NGOs participation in the PRSP. *Journal of International Development*, 18(5), 729-740.

Ishkanian, A. (2008). *Democracy building and civil society in post-Soviet Armenia*. Routledge, Contemporary Russia and Eastern Europe series.

Ishkanian, A. (2009). (Re) claiming the emancipatory potential of civil society: a critical examination of civil society and democracy building programs in Armenia since 1991. *Armenian Review*, 51(1-4), 9-34.

Kaplan, S. D. (2008). Fragile States, Fractured Societies. In: *Fixing fragile states: a new paradigm for development*. Abc-clio.

Lee, T., Johnson, E., & Prakash, A. (2010). Media independence and trust in NGOs: The case of postcommunist countries. *Nonprofit and Voluntary Sector Quarterly*, 0899764010384444.

McLoughlin, C. (2011). Factors Affecting State–non-governmental Organisation Relations in Service Provision: Key Themes from the Literature. *Public Administration and Development*, 31(4), 240-251.

Najam, A. (2000). The Four C's of Government Third Sector-Government Relations. *Research Report Series #25*. Sustainable Development Policy Institute, <https://www.sdpi.org/publications/files/R25-The%20Four%20Cs%20of%20Government-Third.pdf>.

Paturyan, Y. (2000). Perceptions of the Role of Armenian Civil Society in Countering Corruption. Yerevan.

Taylor, M., & Napoli, P. (2008). Public Perceptions of How Media and NGOs Contribute to Civil Society in Croatia's Accession to the EU. *International Journal of Communication*, 2(1), 1226-1247.

Young, D. (1999). Complementary, supplementary or adversarial: A theoretical and historical examination of government-nonprofit relations in the US. In: Boris E. T. & Steuerle C. E. (Eds.). *Nonprofits & Government: Collaboration and Conflict*, pp.31-67. Washington, D.C.:The Urban Institute Press.

Young, I. M. (2002). *Inclusion and democracy (Chapter 5. Civil Society and Its Limits)*. Oxford University Press.

Սոնա Մանուսյան, Նարինե Խաչատրյան
Հասարակություն և հասարակական կազմակերպություններ.
հարաբերությունների խնդիրներ և բարելավման ուղիներ

ԵՐԵՎԱՆ
2015

Sona Manusyan, Narine Khachatryan.
The Society-NGOs Relationship:
Existing Problems and Ways to Improve

Համակարգչային շարվածք և ձևավորում՝ Արսեն Մակարյան
Սրբազրիչ՝ Խոնարի Քարաուղլանյան

Տպագրվել է «Եգեա» հրատարակչատանը:
